

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

087.1
Ի-34

Մ. ԽԵՂԻՆ

ՊԱՏՄՎԱԾՔ =
ՄԵՇ ՊԼԱՆԻ
ՄԱՍԻՆ

1931

ՀՐՈՅԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՍՍԻԿԵԳԱՍԻԿԻ
ԹՐԵԴԻ ԲՈ

Պրոլետարիատ բոլիր յիրկընկըի, միացէք!

087.1
հ-34

Մ. ԻԼԻՆ



891.2-3

ՊԱՏՄՎԱԾՔ
ՄԵԾ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

ՖՈՏՈՍՈՒՏԱԺ
Մ. ՐԱԶՈՒԵՎԱԿԻԶԻ

ԹԱՐԳՄ. ԱԼԱՍԻԿԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՍԱԿԵԼԳԱՍԻՒ

1931 Բ Կ Տ Լ Ի Ս

26 APR 2013

16272

23 JUN 2000

ՄԵԾ ՊԼԱՆԻ

ԹՎԵՐ—ԱՎԱՏԿԵՐՆԵՐ

Կան գրքեր՝ պատկերներով, վոստավլորներով,
պատմվածքներով:

Այդ գրքերը շատ հետաքրքիր են. հեշտ ե կտրութել ու դիտել:

Կան և գրքեր թվերով, աղյուսակներով: Այդ գրքերով մենք սովորում ենք, բայց մեր համգլուստի ժամերին այդպիսի գրքեր չենք կարդում, ձանձրալի ու տաղտկալի յեն:

Սակայն կա մի գիրք, վոր թեև ամբողջապես թվերից ու աղյուսակներից ե կազմված, չափաղանց հետաքրքիր ե, ավելի հետաքրքիր, քան վորեւ արկածային վեպ:

Այս գրքի ամեն մի թիվը — մի-մի պակեր ե: Արտաքուստ այս գիրքը վոչ մի հետաքրքիր բան չունի, թվեր ու թվեր, ինչպես դասագրքերում: Սակայն յերբ ոկտոսմ եք կարդալ, ել չեք ուզում թողնել:

Խոնչ են ասում այդ թվերը

Մեծ գետի ափին ցաք ու ցրիվ ընկած են ապառաժի կտորներ: Սարսափելի մեքենաները հնադարյան կենդանիների նման մագլում են լեռն ի վեր



Տպ. Ա. Ֆ. Մատանիսանի անվան, հրատ. „Զարյա Վոստոկանի”
Գաղտնական 2333 91ավելիս 1703 Տիրաժ -2.000

Հսկայական սպառուղքներով։ Այնտեղ, ուր յերբեք գետ չի յեղել, նոր գետ և բացվում 100 կիլոմետր յերկարությամբ։ Հանկարծ մի հսկայական լիճ և առաջ գալիք, հենց այնտեղ, ուր միայն ու միայն վայրի խոտեր ելին բուռում, այժմ հարյուրավոր կիլոմետրներով տարածվում են ցորենի արտեր։ Սալանակներ են թռչում Սիրիրի տայգաների վրայով, իսկ կարինեսներում նստած են ծուռաչքանի մարդիկ՝ գաղանի մորթու տարորինակ հագուստով։ Կալմիկների յերկրների մերկ տափաստաններում, թաղթքե յուրթերի կողքին, յերևան են դալիս յերկաթե բնտոն շինություններ։

Պղղաստի կայմերն են բարձրանում յերկը ամեն կողմերում։ Նրանցից ամեն մեկն ունի չորս վոտք և բազմաթիվ ձեռքեր, իսկ այդ ձեռքերից անցնում են ելեքտրոթելեր, ելեքտրոթելերից անցնում և հոսանք գետերի, ջրվեժների, տորֆային ճահճաների ու ածխահանքերի ուժն ու կարողությունը։ Յեղ այդ ամենը թվերով, թվերով ու թվերով։ Այդ գիրքը «Հնդամյա պլանն» է։

Դժվար խնդիր

Շատ դժվար ե խոսքերով պատմել այդ մեծ պլանի մասին։ Մի փոքրիկ դրաւմ պատմել այն ամենը, ինչ զրված ե թվերի, աղյուսակների և ծանոթությունների 1680 եջերում, հնարավոր բար և արդյոք։

Հաղարավոր մարդիկ են աշխատել հնդամյա պլանի համար, և յես փորձում եմ մենմենակ պատմել այդ ամենը։

Այդ պլանն արդեն դադարել և պլան լինելուց, թը-

վերն արդեն մարմին են առել պատմելու համար իշերի փոխվելը։ Հարկավոր ե անձամբ այցելել, տեսնել սեփական աչքերով այն բոլորը, ինչ կառուցվում ե։

Բայց բավական չե տեսնել, պետք ե համկանուլ։ Յես ինժիներ եմ, և լավ զիտեմ տեխնիկայի այն բնագավառը, ուր աշխատում եմ յես։ Միայն յես պիտի պատմիմ ամբողջ շինարարության մասին։ Այդ բանը լավ կտարելու համար, անհրաժեշտ և փոր յես լինեմ և մետաղագործ, և՝ դյուղատնտես, և՝ մեքենագետ, և՝ քիմիկոս, և՝ տնտեսագետ, և՝ հիղուսեինիկ։


Ամեն տեղ լինել, ամեն ինչ զետենալ անհնարին բան ե։ Ի հարկե, յես շատ բան չեմ տսի, շատ բան բաց կթողնեմ։ թող ուրիշներն ավելացնեն, բացատրեն՝ ինչ վոր յես չեմ տսի, կամ ինչի մասին քիչ կասեմ։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՅԵՐԿՈՒ ՅԵՐԿՈՒՐ

1. ՅԵՐԿՈՒ նախագիծը

«Հնդամյա պլանը» մի նախագիծ ե, բայց վո՞մի գործարանի, այլ յերկու հազար չորս հարյուր գործարանի։ Յեկ վոչ միայն գործարանների, այլև քաղաքների, ելեկտրոկայանների, կամուրջների, նավերի, յերկաթուղիների, հանքերի, խորհուտնությունների, կոմոնտեսությունների, գլոբոցների, գրադարանների մի հսկայական նախագիծ։ Դա մի ամբողջ յերկու վերափոխման նախագիծն ե, վոր կազմել են վոչ թե մեկ, յերկու, այլ հազարավոր գիտուն մարդիկ։ Շինել ոկտել են վոչ թե տասնյակ, այլ միլիոնավոր բանվորներ։ Մենք



Նկ. 1 — Ամերիկայի ամենաբարձր տներից մեկը:

մենքս ենք կառուցում, իրականացնում «Հնդամյակը»:

Առաջին անգամ այդ խնդիրը քննության առմբարեց 1927 թ. գեկահմբերին XV կուսամագումարում: 1928 հոկտեմբերի 1-ից ամբողջ յերկիրն անցավ նրա իրագործման: Իսկ 1928 թվին արդեն պարզվեց, վոր հնդամյակը կարելի յե իրագործել վոչ թե հինգ տարում, այլ ավելի շուտ:

Այդպիսի նախագիծ դեռ յերբեք վոչ մի տեղ չի յեղել: Ամերիկան ունի բազմաթիվ մեծ գործարաններ, անհամեմատ շատ, քան մենք: Այնտեղ կան գործարաններ, վոր մի բոպեյում բաց են թողնում և ավտոմոբիլ: Այնտեղ կան 60 հարկանի տներ: Վերջերս մի մեծ յերկաթուղային կամուրջ կառուցեցին մի որում: Նրանց գաշտերում աշխատում են միլիոնավոր տրակտորներ: Ամերիկացիք պարծենում են իրենց մեքենաներով, դործարաններով:

Բայց ի՞նչպես են աշխատում այդ գործարանները: Դուք կարծում եք, թե մի ընդհանուր պլանո՞վ: Վոչ, նրանք աշխատառում են առանց վորմեալանի:

2. Խոչ ել լինում, յերբ աշխատում են առանց պլանի

Միստր Ֆոկսը վորտեղից ձեռք բերեց մի միլիոն դոլար: Փողն, ի հարկե, անգործ պառկել չի սերում: Միստր Ֆոկսը հետեւում է լրագրութին, խորհուրդ և հարցնում բարեկամներից, վարձում ե գործակալներ: Գործակալները առավոտից մինչև յերեկո վոտնատակ են տալիս քաղաքը, դիտում, հարցու փորձ անում, թե ի՞նչ բանի կարելի յե գործադրել միստր Ֆոկսի փողերը:

Վերջապես գործը դուան։ Գլխարկներ։ Ահա
թէ ինչ։ Գլխարկները լավ ծախվում են, մարդիկ
արտանում են։

Յերկար բարակ մտածել հարկավոր չե։ Միստր
նոկսը կառուցում ե գլխարկի Փաբրիկա։

Նույն միտքը, նույն ժամին, ծագում ե և միստր
նոկսի, և միստր Կրոկսի, և միստր Նոկսի գլխում։
Բոլորն ել միաժամանակ սկսում են կառուցել գըլ-



Եղ. 2. — Ամեն առաջ ցուցանակներ, պլակամեր, աֆիշաներ,
գլխարկներ, գլխարկներ, գլխարկներ։

խարկի Փաբրիկաներ։ Մի կես տարուց հետո յեր-
կիրն ունի արդեն մի քանի գլխարկի Փաբրիկաներ։
Խանութիները լեփի լեցուն են գլխարկի տուփերով։
Ամեն տեղ ընկածներ, ցուցանակներ, աֆիշներ -
գլխարկներ, գլխարկներ, գլխարկներ։ Գլխարկ
պատրաստել են ավելի, քան հարկավոր ե. յերկու
յերեք անգամ ավել պահանջից։ Իսկ Փաբրիկա-
ները չարունակում են աշխատել ամբողջ թափով։

Այստեղ ահա կատարվում ե այն, ինչ չելին
նախատեսել վոչ միստր Ֆոկսը, վոչ միստր Նոկ-
սը, վոչ ել միստր Կրոկսը։ Հասարակությունը դա-
դարում ե գլխարկ գնելուց։ Միստր Նոկսը իջեց-
նում է զինը 20 ցենսով, միստր Կրոկսը 40 ցենսով,
միստր Ֆոկսը գլխարկը ծախում ե վնասով, — միայն
թէ աղասովի նրանցից։

Բայց գործերը չարունակում ե ավելի ու ավել-
ի վատանալ։ Լրագրներում լույս են տեսնում հայ-
տարարություններ։

«Դուք մի գլուխ ունեք, բայց այդ չի նշանակում,
թէ մի գլխարկ եք ունենալու։ Ամեն մի ամերիկացի
ուետք ե ունենա 3 գլխարկ»։

Գնեցեք Ֆոկսի գլխարկները

Միստր Պոկսը առաջարկում է գլխարկներ՝ 3 տա-
րում վճարելու պայմանով։

Միստր Նոկսը հայտարարում է եժան վաճառք։

«Միայն մի որ, ոպովեցիք հանգամանքից»։

Սակայն այդ ել չի ոգնում։ Միստր Ֆոկսը պա-
կանեցնում ե բանվորների աշխատավարձը-չաքա-
թական մի դոլլար։ Միստր Կրոկսը ողականեցնում
ե աշխատավարձը չաքաթական 2 դոլլար։

Իսկ զործերն ավելի ու ավելի վատանում են: Ու հանկարծ ... միտր Թոկուր փակում է իր Փարբեկան, 2 հաղար բանվոր ստանում են իրենց հաշվները, ուր ուզում են դնան: Հետևյալ որևէ փակում են նաև Նոկսի Փարբեկան: Մի շաբաթից հետո արգեն փակում են բոլոր գլխարկի Փարբեկաները: Հաղարալոր բանվորներ անդորձ են: Նոր մեջնահերը ժամդուլում են: Շինությունները քանդում, փակում են:

Անցնում են մեկ յերկու տարի: Նոկսից, Թոկուր, Կրոկսից գնած գլխարկները մաշվում են:

Հասարակությունը նորից սկսում է գլխարկ գնել: Գլխարկների խանութիները դատարկվում են: Վերաբնակներից ցած են բերում փոշակալած գըլթարկները: Գլխարկները հերիք չեն անում: Գները բարձրանում:

Ու այժմ արդեն, վոչ թե միտր Թոկուր, այլ մի ուրիշ միտր Դուռը սկսում է ձեռնոտու գործը՝ գըլթը ծագում են նաև ուրիշ ինքուք ու ձեռնարկու միտր՝ միտր հանց՝ միտր Բուրլի, միտր Թուրլի և միտր Նուրդե: Ինչ վոր կատարվում է զլիարկի հետ, նույն նույն միտր նը տեղի յեւ ունենում կոշկների, շաքարի, չուզունի, ածուխի և նալլթի հետ: Գործարաններն աճում են սպանի բշտիկների պես և փուլ դալիս: Կարելի յի կարծել, թե մարդիք նելքները կորցրել են:

3. Խելացնոր յերկիրը

1920 թվի սեպտեմբերի 1-ին Վաշինգտոնից մի դնացք ուրբա յեկալ մի չողեկառք, յերեսուն վա-

դոն: Վագոնները բարձված եյին ձմերուկներով: Ձմերուկները շատ հասուն և ամուր եյին և ամեն մեկն արժեկը 25 ցենտ, մեր վողով 50 կոպեկ: Գնացքն արագ սլանում եր դեպի հյուսիս: Պատոմագ գետի յեղերքին, այսուեղ, ուր յերկաթղիծն անցնում է թեքվածքով, գնացքը կանգ առավ: Վագոններից մեկի մոտ մարդեկ ի՞նչ վոր իրար անցան:

Ու հանկարծ՝ հո՞պ, հո՞պ: Մի ձմերուկ գլորվեց ջուրը, ապա յերկրորդը, յերրորդը: Ձմերուկների մի ամբողջ լավա հոսեց գեղիներքն: Նրանք գլորվում եյին թռչկոտալով, իրար զարնվելով, ջարդու փշուր լինելով: Գետի յեղերքին ջրի մեջ գոյացալ ձմերուկների մի պատնեշ – մի չողացող կանաչագույն կղզի: Մի վագոնին հետեւց յերկրորդը, յերրորդը: Գործը շատ արագ եր կատարվում: Մի վագոնը 2 լոպեյում. յերեսուն վագոնը՝ մի ժամում:

Շոդեշարժը չչաց, գնացքը շարժվեց: Մարդեկ թռան արգելակների վրա: Գնացքը վերադարձավ: Ձմերուկները գանդաղ սկսեցին շարժվել Պատոմագ գետի ուղղությամբ:

Այս պատությունը յես չեմ հնարել: Յեթե ցանկանում եք ինձ ստուգել՝ վերցրեք Ստուարտ Զիզի «Վոտնամանների տրագեդիա» գիրքը: Ստուարտ Զիզը ամերիկացի յե, աշխատանքի դեպարտամենտի աշխատակից: Ձմերուկի պատմությունը գուշ կզըսնեք նրա գրքի 102 յերեսում:

Ահա թե ուրիշ ել ի՞նչ ե պատմվում այդ գըլթը քում:

«1920 թվին հաղարավոր գալոն (մի գալոնը՝ 3,7 բաժակ) կաթ թափեցին Հարավային Իլինոյսի գետերն ու առվակները»: «1921 թվին, հոկ-

տեմբերին միջին արևմտյան նահանգներում ձանապարհներին ցցված ելին պլակատներ՝ վորոնք խորհուրդ ելին տալիս ազարակառերին հաճար վառել ածուխի փոխարեն»:

1924թ. 24 հունիսի Նյու-Յորկի «Աշխարհ» լրագրում լույս տեսակ մի այսպիսի լուր. «Այսոր նավահանգստի մոտ վոչչացրվեց հաղարավոր տոպրակ վարունգներ»:

«Մենեցում պարբերաբար վորոշ տարիներից հետո գետնախնձորի բերքի մի խոչոր մասը թողնում են գետնի տակ, վոր փթի»:

Ահալասիկ մի նմուշ լրագրների վերջին լուրերից.

Արևմտյան նահանգներում կրկին, ինչպես և 21 թվին, հացահատիկն այրում են վառելքի փոխար-

բամբակի պլանտացիաներում տարածում են բամբակ խժողով բզեզը:

Ավտոմոբիլների Փաբրիկանտները միլիոններ հն ծախսում, գնում են հին ավտոմոբիլներ և վոչչացնում:

Շոգենավային ընկերությունները վոչչացնում են հարյուրավոր նոր չողենավեր ու մոտորանավեր: Ի՞նչ բան է այս: Խելագարվել են մարդիկ ի՞նչ է: Այրել հաճարը, թափել կաթը, վոչչացնել ավտոմոբիլը, չոգենավերը—ինչու՞ հաճար և ամենը, ո՞ւմ է ձեռնտու այս բոլորը:

Դա ձեռնտու յե միստը Ֆոկսերին ու Պոկսերին: Միստը Ֆոկսը այրում է մի քանի գնացք հացագոկը հրամայում է 10,000 շիչ կաթը թափել գետը, վորպեսդի կաթը եժան չժախվի:

Մինչդեռ Նյու-Յորկ քաղաքի դպրոցական բլույշիները վկայում են, վոր այդ քաղաքի չորս յերեխայից մեկը քաղցած է:

Յերկիրն ունի միլիոն մեքենաներ, պահեստատեղերը տրավվում են ապրանքներից, հաճարն այրում են վառելքի փոխարեն, կաթը թափում են դետը: Յեկ միենույն ժամանակ նույն այդ յերկում հաջում են հաղարավոր քաղցածներ:

Ամերիկացիները հպարտությամբ ասում են. «Ամեն մի ամերիկացի բանվոր ունի 230 մեքենա ստրուկ»: Յեթե հացը թե յերկիրն ինչքան մեքենա ունի և քանի բանվորի յե փոխարինում, կասենք, վոր դա ճիշտ և միանգամայն:

Հապա յեթե արդակն է, պատճառն ի՞նչ է, վոր միջին ամերիկական քաղաքները կարիքի մեջ են: Ինչու՞մն է գաղտնիքը:

Խնդիրն այն է, վոր բոլոր այդ մեքենաները, բոլոր այդ հրաշակերտ մեքենաները պատկանում են վոչչ բոլոր ամերիկացիներին, այլ չաս սակալաթիվ մարդկանց: Միայն «ավտոմոբիլների թաղավոր» ֆորդն ունի 60 գործարան Ամերիկայում և 28 գործարան ել ուրիշ յերկներում: Նա ունի իր սեփական յերկաթուղիները, սեփական նավերը, սեփական հանքերը, անտառներ, լեռներ, գետեր: Յեթե հալաքենք նրա խոչոր գործարանների բանվորներին իրենց ընտանիքներով մի տեղ, ապա կստացվի մի քաղաք Յիլիոն ազգաբնակչությամբ: Այդ նույն է, թե մի ամբողջ Մուկվան ու Լենինգդել կեսը աշխատեն մի մարդու համար:

Մեկն ունի մեքենաներ, միլիոնավոր մարդիկ պետք է աշխատեն մեկի համար:

4. «ԽԱՀԱՄ և ՀԱՅԻ»

Մենք շատ քիչ մեքենա-տրակտորներ ունենք:
Ամեն մի ամերիկացի բանվոր ունի միայն 20 մե-
քենա ողնական:

Բայց մեր մեքենա ողնականները պատկանում
են վոչ թե միստեր Ֆոկսին կամ միստեր Պոկսին,
այլ բանվորներին, իսկ այդ համագումանքը ամեն
ինչ փոխում է: Ել ինչու պետք ե բանվորները ջար-
դեն ավտոմոբիլները, թափեն կաթը, այլևն հա-
ճարը ածուխի փոխարեն, վոչնչացնեն տոպլակնե-
րով լի վարունգները: Բանվորը շատ լավ գիտի,
վոր ավտոմոբիլը, կաթը, հաճարը, վարունգները
աշխատանքի արդյունք են: Վորակեսդի ավտոմոբիլ
մնի, հարկավոր ե, վոր մեկն աշխատի, շինի այն:
Նել: Մեզ մոտ աշխատանքը ու ժամանակ կորց-
Ամերիկայում՝ առանց պլանով:

Նրանք ցանքեր են վոչնչացնում:

Մեզ մոտ արտադրությունն աճում է:

Ամերիկայում արտադրությունը կրճատվում է,
անգործովդյունը բազմանում:

Մենք շնում ենք այն, ինչ անհրաժեշտ է:

Ամերիկայում հարյուրավոր գործարաններ հում
նյութ, եներդիմա յեն վասնում այնպիսի բանի հա-
մար, վոր բնավ հարկավոր չե:

Ստուարտ Չիպն ասում է. «Մենք խեղդվում ենք
այնպիսի երերից, վոր չենք հագնում, դեն ենք ձը-
րեկամներին. մի բան, վոր վոչ վոքի հարկավոր չե՝
հաշերժական փետուրներ, հրաքարեր, եժանազին
մատանիներ, ածելիներ. ամեն տեսակ զիղի-բիզի ի-

րեր: Մենք վոչնչացնում ենք հանքերի ահազին
զանգվածներ միայն նրա համար, վոր մի քանի ամ-
սից հետո նրանով լցնենք աղբի զամբյուղները»:

Իսկ ինչքան փող ե ծախավում սելլամների վրա:
Ամերիկական լրադրությունները հայտարարությունները
կարդալու համար հարկավոր ե 500 տարի: Բոլոր
գեղատեսիլ վայրերում դուք կտեսնեք խոչը գու-
նավոր պլատաններ: Անտառի յեղին ձեզ վողջու-
նում ե «Սմիտի առամի պատուն» սելլամը, լե-
ռան գալաթին ձեզ վողջունում ե մի այլ սելլամ՝
«Կիլապուկսի Հնդկական Սագվա»:

Գիշերները քաղաքը լրասավորված է բազմաթիվ
ելեկտրական ցուցանակներով ու գրություններով:
Կիվլիտի ընկ. կտուրին պարզում ե մի զրություն. այդ
ցուցանակը շատ ավելի ելեկտրական հոսանք է բա-
նեցնում, քան ամբողջ քաղաքը:

Միլիոն տոնն հում նյութ, միլիոն տոնն վառելիք,
միլիոն բանվորական որեր վատնում են միայն
նրա համար, վոր հարկադրեն մարդկանց գնելու
այն, ինչ իրենց հարկավոր չե: Մարդու աշխատանքը
չարաչար վատնվում է, համարլում և անարժեք
բան: Յեկ այս ամենի պատճառն այն է, վոր մեքե-
նա ստրուկները պատկանում են միստեր Ֆոկսին,
միստեր Պոկսին, և վոչ թե բանվորներին: Միստեր
Ֆոկսին կամ միստեր Պոկսին միւնույն է, թե ի՞նչ
է շինվում, միայն թե վող վատակի, չահի:

Ինչու՞ համար ե միստեր Ֆոկսը գլխարկի Փար-
բիկա կառուցում: Դուք կարծում եք նրա համար,
վոր գլխարկներ պատրաստի՞: Վոչ, հազար անգամ
վոչ. միայն նրա համար, վոր փող վատակի:
Կեղալ, հիվանդովթյունը, ամրուծովթյունը, ու-

Ժեց վեր աշխատանքը և «դերիչխող դառնան իսկա-
ցի կանոնավոր կարգեր»:

Մենք գործարաններ ենք կառուցում, վոր մենականները շատ լինեն և այդ մեքենաները հավասարապես պատկանեն ու աշխատեն ամենքի համար: Մենք ուզում ենք հաստատել յերկրի վրա ըլտեսնված կարգեր՝ սոցիալստական կարգեր:

ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀԵՏԱԽՈՒՅԶՁՆԵՐԸ

1. Հնգամյակի հետախույզները

Ծառ հեշտ և ասել՝ կառուցել հարյուրավոր քա-
ղաքներ, հարյուրավոր գործարաններ։ Ինչի՞ց կա-
սուցել։ Ողի՞ց։ Զե՞ վոր հարկալոր են աղյուսներ,
ցիմենտ, ապակիներ։ Հերի՞ք է մեր ունեցած յեր-
կաթը մեքենանելին։ Պատրաստի նյութեր մենք քիչ
ունենք, բայց հում նյութեր վորքան կուղեք։
Եթե մասնաւ

Յանձնութեան վարչական կուլտքը :
Յեթէ վագոնի պատուհանից դուք տեսնում եք
միայն ամայի տարածություններ, անտառներ
ձահճներ, դուք ու ու

Ամալի առաջնորդությամբ:

Օսայի տարածությունները - կավ, ավագ ու քար են: Այստանիները՝ ձողեր, սյուներ ու կոճղեր: Տորփի ճահիճները-ելեքտրական հոսանք են: Կամիլից ու ավալից մենք պատրաստում ենք աղյուսներ, կավ ու կրից ցեմենտ, յերկաթաշահնքից՝ յերկաթ:

Հում նյութ մենք շատ ունենք: Առաջին խնդիրն
այս է, մոր սկսենք հետախուզել: Զի կորելի կռիվն
սկսել առաջ հետախուզության և հետախուզումն ընթա
ցում է: Միասուլ, մրգսի համար ամեն մի գործարան
փողի գործարան է, շահույթի գործարան է:

Բանվորն ել միստը Ֆոկսի համար բանվոր
չի, մարդ չի, այլ մեքենա՝ չահույթ վաստակելու
համար: Չուզումի մեքենան խնամում, պահպանում
են, չի^օ վոր նա մեծ փող արժե: Խոկ մարդ մեքենան...
վոչինչ չարժե: մարդ մեքենան ամերիկական դոր-
ծարանում աշխատում ե ուժից վեր: կենդանի մե-
քենան մաշվեց, ուժասպառ յեղափ՝ դուրս գործա-
րանից: նա այլևս հարկավոր չի: կդան նորերը նը-
րանց փոխարկելու:

Ստուարտ Զիզն ասում է, վոր քառասունից անց
բանվորին ել գործարանում չեն ընդունում։ Քա-
ռասուն տարեկան ամերիկական բանվորը ծեր և հա-
մարիռում։

Ամերիկայում մեքենան բանվորի ողնականը չի, նրա բարեկամը չի. նա նրա թշնամին և Ամեն մի նոր մեքենա, ամեն մի նոր գյուտ փողոց և շպրտում հաղարավոր բանվորներ: Ապակու գործարանում մի բանվոր պատրաստում է 3000 շիշ, իսկ առաջ դրա համար հարվակվոր եր 77 բանվոր. որինակ՝ ամեն մի շիշ պատրաստող մեքենա փողոց և շպրտում 76 մարդ: Յեվ ամերիկական բանվորը ատելով ատում է մեքենան, մոտ խոր իր հացը, ապրուստի միջոցը:

Միամբերիկացի գրող ասում է. «Մեքենաներն աճում բազմանում են ավելի ու ավելի: Մենք ենք նրանց մնել, իսկ այժմ նրանք մեզ չըջապատել են, վորպես վայրի տհարկու դադաններ և մենք նրանց տիրապետության տակ ենք գտնվում»:

Խալ մեղանուր՝ Վորքան շատ մերենա ունենանք, այնքան հեշտ կլինի աշխատանքը, այնքան կարծ կլինի բանվորական որբ, այնքան հետու հաճելի կլինի կյանքասական գործառնությունները:



Մենք գործարաններ ենք շինում, վոր վերանա
աղքատությունը: Ամեն տարի մենք արլուսվախըմ-
րեր ենք ուղարկում ամենահեռավոր վայրերը, բե-
մուային շրջանը, Կաղակատանի անոպանները, Աւ-
թայի և Պամիրի լեռները:

Մի խումբն անցնում է Սիրիի ճահճային տունդր-
աներով՝ առանց քարտեզների, համարյա պատահ-
մունքի հուսով: Մարդիկ քայլում են ու ցանցի դի-
մակները հագին: Այլ կերպ չե կարելի աղատվել մո-
ծակներից ու մակներից: Արշավախումըն առաջ է
գնում ու նրան քայլ առ քայլ հետեւմ և մի այլ թըո-
չող մոծակային արշավախումը: Տունդրա՝ կասես
ու հրթի:

Նույն այդ ժամանակամիջոցում հարսվում շլո-
ջում է հետախույզների մի այլ խումբ: Գնում են
արահետներով, ասես հոկայական պատերի քիվե-
րով: Իսկ վտաներից ներքեւ՝ հարյուր մետր ան-
դընդախոր վիճ: Թե վախենաս ու սայթաքես, վող
տեղդ ականջդ կմնա: Բայց հետախույզը վախ չպի-
տի ունենա: Ու մարդիկ առաջ են անցնում, ամբողջ
մարմինը սեղմելով քարապատերին, բորիկ վոտ-
ները՝ քարաժայսերին:

Տաս տարվա ընթացքում 1919 թվից սկսած
զիսությունների ճեմարանը յերեքհարյուրյոթահա-
սունմեկ արշավախումը և ուղարկել:

Յել այդքան միայն գիտությունների ճեմարա-
նը, իսկ վո՞րքան հետախույզներ են ուղարկել մեր
մյուս գիտական ինստիտուտները: Վորքան ինժե-

ներներ պրավումներ են կատարում այնակող, ուր
վորոշված և յերկաթուղի անցկացնել, ջրանցքներ
փորել, ածխահորեր քանդել, գործարաններ հիմնել:

Ամբողջ յերկրում աշխատում են հետախույզնե-
րը:

2. Ի՞նչ են ասում հետախույզները

Ի՞նչ են ասում նրանք: Հաջողվեց նրանց վորեւե
րան հայտնագործել:

Նրանք ասում են, վոր մենք մեր յերկիրը չենք
ճանաչում: Նրանք ասում են, վոր մեր յերկիրը
դեռ հայտնագործված չե:

Կարելիայում, բենույին շրջանում, տունդրա-
ների մեջ նրանք գտան նիբինի մեծ լեռները: Իսկ
գիտե՞ք, թե ինչ են այդ լեռները:

Ամենաարժեքավոր նյութերից՝ նիֆելինից ու
ապատիտից: Նիֆելինը տալիս է մեղ ապակի և ա-
լյումին, իսկ ապատիտը՝ սուլերֆոսֆոր—մեր դաշ-
տերի պարարտանյութը: Այդ նյութերից այնակող
կան տասնյակ, հարյուրավոր միլիոն տոնն:

Կարակումի անապատում գտան ինչ վոր տարո-
րինակ բլուրներ: Կարծես հակաները հանաք են ա-
րել, պատրաստել են ավազից աղյուսներ: Յերբ փոր-
փորեցին այդ բլուրները, տեսան դա ավազ չե,
այլ ավազի ու ծծմբի խառնուրդ: Իսկ ծծումբը մենք
ստանում ենք իտալիայից. բերում ենք հետու տե-
ղից՝ ահագին գումար ծախսելու: Ծծումբը մեկ
հարկավոր և նաև թուղթ պատրաստելու համար:
Ծծումբը չաղ են տալիս խաղողի, բամբակի վրա
վնասատուներից ազատելու համար: Ու հանկարծ
դուրս ե գալիս, վոր մենք ծծմբի պաշարներ ունենք:

Հետախույզները Սիբիրում գտան ինքնանիստ
սողայի լիճ։ Իսկ զետեք ի՞նչ բան է սոդան։ Դա
մի նյութ ե, առանց վորի սապոն չի կարելի պատ-
րաստել։ Յեզ վոչ միայն սապոն, այլ շատ ուրիշ
լրեր։ Սապոն սլատրաստում են աղից։ դրա հա-
մար շինում են խոշոր գործարաններ, մինչդեռ պատ-
րաստի սողա կա լճերում, վերցրու ինչքան քեփդ ու-
ղում ե։

Հետախույզները Յակոտիյում յերեան հանեցին
հսկայական ժայռեր՝ վաֆսում հարկանի տնից ել
բարձր, մաքուր քար հող։ Հետախույզները Յակո-
տիյում գտան նաև այլ զարմանալի բաներ՝ գիպսի
հսկայական թափանցիկ բյուրեղներ՝ յերեսունհինգ
անգամ յերեսունհինգ սանտիմետր մեծության։ Իսկա-
կան պատուհանի ապակի, միայն վոչ ապակուց։
Վերցրու ու պատուհանին դցիր։ Հապա կազմակստանի
խաղը լլան։ Խաղը լլան մի այսպիսի բույս ե։
Գիտնականները խաղը լլայի թփերի վրա նկատեցին
ինչ վոր տարորինակ բշտիկներ։ Հետախուզովթյունը
ցույց տվեց, վոր նրանք կառուչուկ են, այն ինչ
մենք արտասահմանից կառուչուկ ենք ներմուծում մեր
ուղինի գործարանների համար։

Խաղը հայտնագործման լուրը դեռ չտա-
րածված, գտան մի ուրիշ ել տվելի արժեքավոր
բույս՝ թառւսաղը։

Թառւսաղը նույնպիս կառուչուկային բույս
է։ Գիտնականներն ասում են, վոր ամբողջ աշխար-
հում չկա մի ուրիշ բույս, վոր այնքան կառուչուկ
տա, ինչքան թառւսաղը։
Ել վոր մեկն ասեմ. ենքան շատ են հետախույզների
գտածները։

Բայց հետախույզները մենակ անուանեցում,
տափաստաններում ու անապատներում չեն, վոր աշ-
խատում են։ Ամեն մի լաբարատորիայում կան հե-
տախույզներ։ Նրանք մի լաբարատորիայում կան հե-
տախույզներ։ Վրանք ասում են՝ կարիք չկա, վոր
բոլորը գնան հաղարավոր կիլոմետր հեռու անձեռի
տակ ընկնեն, ցրտից դողդողան։ Մենք ահա այս-
տեղ, այս սեղանի մոտ, ապակե փորձանոթների
մոտ կգտնենք արժեքավոր հում նյութ մեր գոր-
ծարանների ու Փարբիկանների համար։ Մենք կսովո-
րեցնենք գործարաններին հում նյութ սառանալ թափ-
թփուկներից, մի բան, վոր վոչ վոքի հարկավոր
չե, թափված ե մեր վուների տակ։ Յեզ ահա գը-
տել են թուլթ սլատրաստելու նոր միջոց։ յեղե-
ղից թուլթ են շինում, հասարակ բրդից նուրբ մա-
հում, շաքարի Փարբիկանների թափթվուկներից՝
շաքար։

Հում նյութ շատ ունենք։ Զալեսք ե անհանգըս-
տանալ։ Մեր յերկիրը միայն արտաքուստ ե աղ-
քատ ու դատարկ։ Մեր տորֆի ճահիճներում կկա-
ռուցենք ելեքտրոկարաններ ու այդտեղից հոսանք
կուլարկենք հեռավոր վայրեր։ Սոճիներից կպատ-
րաստենք թուլթ։ Տափաստանները, ուր միայն
փետրախոտեր ու յեղենիներ են բանում, կհերկենք
ու կլերածենք հայատու վայրերի։

Կդա մի որ, վոր քամուն ել կատիպենք աշխա-
տելու։ Մեր գիտնականները գտել են մի ձեռնուու
քամու շարժիչ։

Իսկ գետնի տակ ունենք՝ ածուխ, յերկաթ,
ցինկ, սլղինձ։ Ու գեռ նոր ենք սկսել այդ ամենը
հայտնագործել։ Հինգ տարի առաջ մենք կարծում
ենք, թե Սիբիրում կուզնեցի ավագանն ունի 250
միլիոնդ տոնն ածուխ։ Այժմ մեր հետախույզները


Դասել են մի Հարյուր հիսուն միլիարդ տոնն ածու-
խի պաշար։ Այս քեզ բան։ մի հսկայական ածու-
խի լեռ 5 կիլոմետր բարձրությամբ։ ինչպէս ե, վոր
այդպիսի մի լեռ վրիպել եր աչքից։

Նրա համար եր վրիպել աչքից, վոր ածուխը
գետնի տակն ե, քար ու հողով ծածկված։ Նա գետ-
նի մեջ խորը թաղված ե շերտ-շերտ։ Վերևից
խոր չի յերմում, թե ինչ կա դեմքի տակը։ Նրան
հանելու համար պետք ե փորել, փորփորել, անցք
բաց անել։ Իսկ այդ հետո բան չե։ Հեշտ ե, ի հար-
կե, յեթե գետինը փիրուն ե. Իսկ յեթե պինդ քար
մինի։ Պատահում ե այնպես, վոր վոչ մի պող-
պատ չի բռնում. պետք ե փորել ալմասով։ Կուզնե-
ցի ավարանը դեռ վոճինչ։ Այնտեղ նոր-նոր ենք
սկսում ածխահորեր փորել։ Իսկ Դոնավազանում
(Դոնավասում) կես դար ե աշխատանք ե տարվում։
Բայց ի՞նչ. ճանաչո՞ւմ ենք, գիտե՞նք Դոնավազանը։
Վո՞չ, չգիտենք։

Այնտեղ ածխահորեր են փորում համարյա պա-
տահականորեն, առանց նախորոք իմանալու, թե ինչ
չերտ ե, ի՞նչ խորություն ու հաստություն ե։
Հապա յերկաթը։

Կարո՞ղ ելինք մի տարի առաջ ասել, թե Նիժնի
Վոլգայում յերկաթ կա։ Իսկ այժմ արդեն այստեղ
կառուցում ենք Խոնկիրի հսկայական մետաղաձուլա-
րան գործարանը։ Այդ գործարանը մեզ տալու յե
տարեկան 650 հազար տոնն չուգուն։

Նույնը պետք ե ասել նաև նավթի մասին։ Վեր-
ջերս պրոֆեսոր Պրեոբաժենսկին նավթ դտավ այն-
տեղ, ուր առաջ չելին ել մտածում, վորոնումներ
կատարեց Պիրմի մոտ՝ նրանից քառասուն կիլոմետր
հեռու։ Գիտնականները նույնիսկ պատմում են, վոր



Նկ. 3-Պեղող մեքենաները Դնեպրստրոյում։ Բուրգեր, յեր-
կաթե վասներով. վերեսում ծիծենիկն ե, վորի վրայից անց-
րած և յերկաթաթուկը։ Յերկաթաթուկից կախված ե 80 կիլո-
տրամանոց դուրը։ Դուրը բարձրանում ու ցած ընկնում և
ամեն ընկնելիս հարվածում ե ժայռին, ու վշտում։ Ամեն
վայրկյանում մի հարված, բովեցում 60։ Որտեղն 80 վոր-
աքար և ծակում դուրը, իսկ ընդհանրապես կարող ե մին-
չե 200 մետր ծակել։

նավթ պետք է մինի Միջին Վորլայից մինչև Ռեբալ դանվող ամբողջ տարածության վրա: Մի խոսքով ամեն տեղ պետք է յերկրի յերեսը ծակոտել «զնդա- սեղով»—հետախույզի բըիչով: Յեզ հետախուզումը շարունակվում է: Շատ վայրերում արդեն դրված են պղղատի յերկարավոտ հսկաներ՝ պեղող բան- կահների բուրգեր: Պողպատի և ալմասավոր բրիչնե- րը փորում են հողը, ծակում են քարը, հասնում ե յերկրի այն հարթություններին, վորոնք թագնված են անպետք, «դատարկ» հողաշերտում՝ տասնյակ ու հաղարավոր մետր խորության մեջ:

3. Ամեն մի աշակերտ հետախույզ պետք է լինի

Ամեն աշակերտ յերազում է ճամբորդել հեռա- վոր յերկրներ՝ Աֆրիկա, Ամերիկա, Հնդկաստան: Բայց ինչու՞ այդքան հեռու գնալ: Ճանաչում ե՞ք ձեր ապրած շրջապատը: Կարող ե՞ք ասել, թե արդյոք կա՞ն ձեզ մոտ տորփի ճահիճներ, շինարա- րական վառելքներ, կրաքարեր, ֆոսֆորիտներ, շինարարական ավազ, աղյուսի և սոմանի կազ: Ի հարկե, այդ ամենը դուք չգիտեք:

Յեզ առաջին ճամբորդությունը դուք պիտի կատարեք ձեր գյուղի կամ քաղաքի մշակայքում: Կաղմակերպեցեք արշավանքներ, կաղմեցեք ման- րամասն քարտեղներ: Նշանակեցեք այդ քար- տեղների վրա այն ամենը, ինչ կարող է պետք դալ հնդամյակին: Դիմեցեք ձեր ընկերներին և ուսու- ժիչներին. նրանք ձեզ կողնեն, կառվորեցնեն, թե ինչպիս ջոկել, ճանաչել հանքաքարերը: Դուք դեռ չգիտեք դիտել: Հաղիվ թե կարողանաք ջո-

կել հասարակ քարը հանքից: Իսկ դա պետք է ի- մանա հետախույզը:

Միայն գրքերը բավական չեն: Պետք է անձամբ տեսնել ու տնտղել: Լավ միտներդ պահեք. այն յեր- կերը, ուր դուք ապրում եք, դեռ հայտնագործված չե:

Հայտնագործեցեք նրան:

Գլուխ Յերրորդ

ՍԵՓԱԿԱՆ ՅԵՐԿԻՐ ՆՎԱՃՈՂՆԵՐԸ

1. Սեփական յերկիր նվաճողները

Հետախույզների ջոկատին հետևում և նվաճող- ների բանակը, բանվորների բանակը:

Ի՞նչ են նրանք նվաճելու:

Բայց միթե կարիք կա այն նվաճելու: Միթե այն յերկիրը, ուր մենք ապրում ենք, մերը չե:

Վո՞չ, մերը չե: Հարցը կիտակ մարդկանց և նրանք կասեն ձեզ, վոր մենք շատ ունենք չյու- րացրած հողեր, չյուրացրած անտառներ, տափաս- տաններ: Իսկ ի՞նչ ե նշանակում «չյուրացրած»: Այդ նշանակում ե՝ «յերկիրը մերը չե»:

Եհվ, իսկապես, կարող ե՞նք մերը համարել ամայի տափաստանները: Կարող ե՞նք մերը համա- րել Յակուտիան: Յակուտիան հսկայական յերկիր է, մեր Միության հինգերորդ մասը: Իսկ ինչքան մարդ է բնակվում այնտեղ—280,000: Այնքան, ինչքան լենինգրադի և Մոսկվայի մի քանի փողո- ցում են ապրում: Յակուտիայում կան անտարի անհուն տարածություններ: Ամեն ամառ հրդեհը լափում է հագարավոր հեկտար անտառներ:

Յակուտիայում կան ածուխ, յերկաթ, արծաթ,
արծիճ, վոսկի:

Բայց այլ ածուխը դեռ գետնի տակ է, մար-
դու ձեռքը գեռ չի դիպել նրան, նա դեռ վոչ վոքի
սեփականություն չէ: Այս անտառը, վոր դեռ չենք
կտրատում և չենք պահպանում, վոչ վոքինը չէ:
Այդ ամենը մերը կլինի, յեթև ցանկանանք, իսկ
առայժմ վոչ վոքի չի պատկանում:

Մեր տափաստանները իսկապես մերը կլինեն
այն ժամանակի, յերբ տրակտորների շարքերը հեր-
կել կոկան կուսական տափաստանները: Ահա այդ
ժամանակ տափաստանները կուտան մերը, իսկ
առայժմ նրանք վոչ վոքինն են:

Մենք պետք ե հայտնարենք և նվաճենք այն
յերկիրը, ուր մենք ապրում ենք: Դա մի հոկայա-
կան յերկիր է: Հինգ հազար կիլոմետր արևմուտ-
քից—արեւելք, չորս և կես հազար կիլոմետր՝ հյու-
սիսից—հարավից: Հյուսիսային բևեռի վերինար-
սկում, ուր զերոյից ցածր յոթանասուն աստիճան
ցուրտ և լինում, և տրոփիկական աստիճան
զանդում, ուր ամառը շող և այնպես, ինչպես Աֆ-
րիկայում, Նեղոսի ակունքներում: Զյուն և սա-
ռույց հյուսիսում, արմավենիներ՝ հարավում:

Ահա թե ինչպիսի հոկայական ճակատում մենք
պետք ե կոփկ մղենք:

Հնդամյակը՝ այլ խոշոր ճակատամարտերից
մեկն է: Պետք ե քանդել հողը, ջարդել ապառաժ-
ները, փորել հանքահորեր, կառուցել շինություն-

Պետք ե գետնից հանել, բարձրացնել, տեղափո-
կան միլիոնավոր տոնն հանքաքարեր, շինարարա-
նյութեր, ածուխ, տորֆ: Ի՞նչ եք կարծում,

ինչո՞վ ենք կատարելու այդ ամենը: Զեռքերո՞վ,
թիւակներո՞վ, բահերո՞վ ու քլունդներո՞վ:

Վոչ, մեղ հարկավոր են այլ գործիքներ:

Այստեղ անհրաժեշտ են այնպիսի թիւակներ,
վոր միանդամից բարձրացնեն մի վագոն հող:
Հարկավոր են այնպիսի լինգեր, վոր միանդամից
ջարդ ու փշուր անեն հոկայական քարափայուեր:

Յեթև անդամ այլպիսի թիւակներ չինենք,
հարկավոր ե նրանց բարձրացնել: Հարկավոր են
ուրեմն բանվոր հոկաներ:

Բայց միթե՞ կան այլպիսի հոկա բանվորներ:
Կան:


2. Բանվոր հոկաներ

Կա հոկա գետնափորիչ: Նա միայն մի ձեռք
ունի, բայց այդ ձեռքի յերկարությունը քսան
մետր է: Գետնափորիչի ձեռքին կա մի թիւակ:
Ասենք դա թիւակ ել չի, այլ մի հոկայական չամչա
յերկաթով: Տնակում դրված են յոթ ելեքտրոսո-
ւոր և աշխատում ե մի մարդ: Գետնափորիչի ամեն
մի շարժում կատարում է մի մոտոր, վորպես թե մի
առանձին մկան լինի:

Մեքենաները նախ շարժում ե մի մոտորը: Պար-
փակիչը իր պողպատե ատամներով խրվում ե գետին:
Հողը լցվում է մեջը: Հերթը հասնում է մյուս մոտո-
րին: Կոթը դանդաղ ծովում ե դեպի վեր, հողով
և պարփակիչը վեր բարձրացներով: Կանգ առ:
Յերրորդ մոտորն է սկսում իր գործը: Գետնափո-
րիչ-հոկան զինվորի նման դեպի ձախ ե շրջվում:
Իսկ այնտեղ արդեն հողի համար պատրաստված ե
վագոն: Մեքենավարը շարժում ե շլթան, պարփա-

կիչի հատակը բացվում ե և հողե ջրվեժը թափ-
վում ե վագոնի յերկաթե վորովայնը:


Կա նաև մի ուրիշ բեռնակիր—հակա: Նա շատ
նման է իր գետնափոր—հակային: Նա յել մի հըս-
կայական ձեռք ունի: Բայց իր այդ ձեռքում բռնում
է վոչ թե թխակ, այլ յերկաթաթոկ՝ ծայրին կեռ:
Յեթե հարկավոր ե բեռ բարձրացնել, բեռնակիր-
հական բռնում ե կեռով և տանում հարկավոր տե-
ղը:



Նկ. 4.—Ելեքտրական եքսկավատոր: Տնակում 7 մոտոր ե, վո-
րոնք շարժում են մեքենայի առանձին մասերը: Հեկավա-
րում ե միայն մի մարդ՝ լծակների և պեղալների ոգնու-
թյամբ:

Ահա այս կայմը, վոր հիմնում եք պատկերի
վրա, հսկա վորմնադիր ե: Յեթե հարկավոր ե,
դիցուկ, կամուրջի կամ ամբարտակի հիմք զցել,
նախ վնում են փայտե կաղապարներ, ապա լլց-
նում են նրանց մեջը բետոնե հեղուկ: Այստեղ ե
ահա, վոր մեզ հարկավոր ե վորմնադիր—հսկան:


Կայմի ստորին մասում մի մեծ տաշտակի մեջ լըց-
նում են հեղուկ բետոն: Մեքենավարը շարժում է
մոտորը և աշտարակը սլանում ե վեր՝ կայմի ուղղու-
թյամբ: Կանդ առ: Հասնում ե վերև և թափում
բետոնը յերկայնաձիգ դույլի մեջ: Իսկ այդ յեր-
կայնաձիգ դույլի միջով, ինչպես առվակ, բետո-
նը հսում ե ուղիղ կազապարի մեջ: Հեղուկ քարե
առվակ: Յեկ վո՞րտեղ: Ողում, բարձր, բարձր,
դիմավերել:



Նկ. 5.—Բարձրացնող կռան: Շարժվում ե ոելսերի վրայով, դե-
կավարում ե տնակում նստած մեքենավարը: Յերկաթաթողին
ամրացրած ե պարփակիչը, վոր բացվում ու փակվում է:
Կռանը ծառայեցնում ե այդ պարփակիչը վորպես թաթ. Հափ-
ում ե ածուխը, ծածկում ու տանում ե ուղած տեղը:
Յեթե բարձրում են վորեկ կոչու իր՝ մեքենաներ, ապա պար-
փակիչի փոխարեն կեռ են կախում:

Շատ մեքենա—հսկաներ են հնարել մարդիկ: Կան
մեքենաներ, վորոնք պեղում են գետինը: Կան
մեքենաներ, վոր կրծում են ածուխը: Կան մեքենա-
ներ, վոր ծծում են տիղմն ու ավազը գետի հատա-

Կից: Մի մեքենա վեր է ցցվում բեռ բարձրացնելու համար, մյուս մեքենան՝ տափականում է լավաշի պես՝ գետնի մեջ փորելու, սողոսկալու համար:



Նկ. 6.- Բեռոն բարելու կամ: Բարձրությունն է 40 մետր:

Մի մեքենա ատամներ ունի, մյուսը՝ կնճիթ, յերրողը՝ բունցք: Մեկը կրծում է, մյուսը ծըծում, յերրողը հարվածում:

Յեկ ամեն մեկն ունի իր անունը: Գետնափորին անվանում են՝ «Եքակավատոր», բեռնակրին՝ «Բարձրացուցիչ կուան», վորմազրին՝ «Աերածող կայի»՝, պեղողին՝ «Աեղող դազդյահ», ածխափորին՝ «Կտրիչ մեքենա»: Շատ մեքենաներ են հնարել մարդիկ, և այդ բոլորը մեզ պետք կդան մեր մեծ գործի համար:

ԳԼՈՒԽ ԶՈՐՈՐԴԻ

ՁՐԻՆ ՈՒ ՔԱՄՈՒՆ ՏԻՐԱՊԵՏԵԼԸ

1. Ի՞նչո՞ւ և ամենից շատ հարկավոր

Ամենից շատ հարկավոր են մեզ մեքենաներ:


Ինչ աշխատանք վերցնես, ինչ դործարան գերցնես՝ մեքենաներ են հարկավոր:

Մեքենա լինելու համար հարկավոր է մետաղ: Մեքենան բանացնելու համար հարկավոր է ուժ, եներգիա:

Ուժ, եներգիա, ինչ բան է այդ և վո՞րուեղից կարելի յէ ստանալ:

Նայեցեք ձեր շուրջը և ամեն տեղ կտեսնեք ուժ, եներգիա: Քամու հոսանքը՝ ուժ է: Զրվեժը՝ ուժ է: Քարածուխի կտորը ուժ է: Փայտի փշրանքը, վոր մենք վառարանն ենք ցցում, ուժ է: Քամին, ջուրը, ածուխը, փայտը—դրանք բոլորն եւ անկենդան իրեր են, բայց կարելի յէ հարկադրի, վոր նրանք աշխատեն, բանեցնեն մեքենայի անիվ-

ները : Բագվի նավթահանքերում քամհարը թափահարում և իր թևերը և գմտի խորքից նավթհանում :



Նկ. 7.—Հողմհարներ Բագվի հանքերում, վորոնք խողովակներով դուրս են քաշում հավթը:

Վոլխովստրոյում ջուրն է պտտեցնում ջրային չարժեխների, տուրբինների անխմները, իսկ սրանք չարժման մեջ են դնում ելեքտրական հոսանք առաջացնող մեքենաները :


Ամեն մի շողեարժի մեջ ածուխը յեռացնում է ջուրը, գոլորչի դարձնում, իսկ գոլորչին հարում և շողեմեքենաների միոցը :

Ուրեմն մեր առաջին խողիրն ե՝ ուժ, եներդիաձեռք բերել մեքենաների համար :

2. Ի՞նչ կարող է տալ մեզ քամին

Մոսկվայում, Վոզնեսենսկայա փողոցում, մի տարրինակ չենք կա: Վոչինչ տարրինակ չեր թրվա, յեթե չենքի աջ կողմից ցցված չլիներ բարձր աշտարակը: Այդ աշտարակը քառանկյունի յի մերկ պատերով, համարյա անպատճեան: Նրա վրա բարձրանում է մի այլ աշտարակ, ամեն կողմից բաց յերկաթի ձողերից շինված: Այս յերկողորդ աշտարակի վերջին մասում պտտվում է, հողմացույցի նման, մի ինչ վոր ահագին ու անհասկանալի բան, նման մի ինչ վոր անսովոր սավառնակի, այստեղ և Կոջիկ՝ կենտրոնական ողջ ջրարանական ինտիտուտի հողմաշարժիչների բաժինը: Այստեղ են հնարում հողմաշարժիչներ: Յեվ այն, ինչ վոր պտտվում է աշտարակի վրա, Կոջիկ հողմահարն է:

Յեթե մենք այդպիսի հողմհարներ կառուցենք ամբողջ յերկորում, կտանաք շատ ավելի մեծ եներդիա, ուժ, քան հարկավոր և ամբողջ աշխարհին: Ժամանակի ընթացքում եներդիայի ծախսումը շատ անդամ կմեծանալ: Յեվ ահա այն ժամանակ



Նկ. 8.—Կոջիկ հողմաշարժիչների բաժինը: Աշտարակի վրա
հողմաշարն է:

Հողմաշարը կկառուցեն այս վայրերում, ուր ուժից
քամիներ են վշտում: Այլբողջ յերկիրը կծածկվի ելեք-
տրոհազորդիչների ցանցով: Յել բոլոր հողմելեք-
տրոկայանները կաշխատեն այդ ցանցի համար:

Հողմաշրերը կդասավորվեն խիստ կանոնա-
վոր, ինչպես շախմատի Փիգուրները տախտակի
գրա: Պետք ե այնպես կառուցել, վոր մի աշխա-
րակը չծածկի մյուսին: Զե՞ վոր, բացի լույսի
սույնից, կա և քամու ստվեր: Յեթե մի հողմաշտ-
րը ընկնի մյուս հողմաշարի հոսանքի մեջ, չի կա-
րող աշխատել: Կկառուցվեն հատուկ կայաններ,
վորոնք կհալաքեն և կպահեն հողմաշրերի հենր-
ուիան այս նպատակով, վարպեսդի կարողանան
ոգտագործել այդ ուժը քամի չեղած յեղանակ-
ներին:

Սակայն այս ամենը ապագա հնդամյակների
խնդիրն է: Իսկ այս հնդամյակը իբրև գործի սկիզբ
առաջադրում ե փոխարինել գյուղի հին, անպետքացած
հողմադաշները Կոջիկ հողմաշրներով և հասցնել
այս հնդամյակում բոլոր մեր հողմաշարժիչների
ուժը 500 հազար ձիու ուժի:

3. Պայմար գետի դեմ

Նվաճել քամին—դժվար խնդիր է: Ավելի դրժ-
վար ե ստիպել ջրին աշխատանք կատարելու:

Մենք ունենք շատ լեռնային ու տափարակային
գետեր: Այդ գետերը կարող են տալ մեզ 65
միլ. ձիու ուժ: Քայլ հարկադրել գետին աշխա-
տել, բոլորվին հեշտ խնդիր չե: Մարդ պետք է
կուիվ մղի գետի դեմ, ինչպես ընտելացնողը վայ-
րի դաղանի դեմ: Բայց ական ե փոքրիկ սխալ, անուշա-

դրություն, և գաղանը կտոր-կտոր կանի քեզ։ Շարունակ կարդում ենք, թե Դնեպրում կտորուցվում ե մի մեծ ելեքտրոկայան։ ԽՍՀՄ-ում չ' գտնվի մի մարդ, վոր լսած չինի Դնեպրոստրոյի մասին։ Բայց քանի՞ուը զիտեն, թե ինչ սոսկալի, գտնան կորվ են մղում մարդիկ այդ գետի գեմ։ Կարծես թե շատ հասարակ գործ ե՝ գետի լայնությամբ ամբարտակ շինել, զնել ջրի տուրբիններ և թող ջուրը պատեհնի այդ տուրբինների անխիսները։ Հեշտ ե միայն ասելու, բայց շատ դժվար ե իրագործելու։ Այդ ամբարտակը, վոր պիտի կառուցի Դնեպրի մեջ, քարե պատնեշ ե համարյա մի կիլոմետր յերկարությամբ ու բազմահարկ տան բարձրությամբ։ Այսպիսի մի պատնեշ կառուցել ցամաքի վրա դժվար չե։ Այնինչ հարկավոր ե շինել գետի լայնությամբ, իսկ դետը չի սպասում, կանգ չի առնում, չի թողնում, վոր իրեն լծեն։

4. ԳԵ'Յ, յետ քաշվիր.

Նայեցեք պատկերներին։ Տեսնում եք, աշխատանքները կատարվում են չոր տեղում, գետի բացված հատակում։ Ինչպես կարողացան ստիճել Դնեպրին յետ քաշվելու։ Այդպիսի բան կարող է լինել միայն հեքյաթներում։ «ԳԵ'Յ, յետ քաշվիր»։ Աչա թէ ինչպես են արել. բաժանել են գետի մի մասը ժամանակաշրջոր վայսե պատվարներով և սկսել են ջրմուղներով ջուրը քաշել։ Հատակը բացվում է, զե՛ աշխատիր գետի հատակին, ինչպես դաշտի վրա։ Բայց այդ բանը գետին դուր չի առած վոսկոր լին։

Գետը ուզում ե պատվարը քշի, հետո լցվի փոսը և խեղդի մարդկանց և մեքենաները։ Յեվ այդովիսի գեղքը պատահեց։ Գետը ճեղքեց պատվարը։ Այդ գեղքը պատահեց 1928 թ. հունիսին։ Հանկարծ ջուրը տարավ պատնեշի վարի մասը։ Ջուրը հոսեց փոսի մեջ։ Զանցալ մի ժամ և ահագին փոսը լցվեց ջորվ։ Մարդիկ հաղիկ պըրծան և ազատեցին մեքենաները։ Զրասույզին ըլցեցին զետը, վոր իմանան, թե ինչ ե պատահել։ Պարզվեց, վոր գետը բացել ե մի ահագին անցք պատնեշի մեջ՝ տաս քառ. մետր յերկարությամբ։ Մեծ դժվարությամբ փակեցին անցքը խիճերով ու չոր ծղնառով լի տոպրակներով։ Իսկ հետո ըսկըսեցին ջուրը հանել։ Քսանյոթ որ անցալ, մինչև ջուրը մաքրեցին փոսից։ Քսանյոթ որում միայն ուղղեցին այն, ինչ գետը քանդել եր մի ժամում։

5. Ինչպես գետը շուր տվեց պողպատի պատը.

Մի ավելի մեծ փորձանք պատահեց հուլիսի 12-ին։ Փոսի պատնեշի աջ մասում աշխատում ելին՝ փայտե պատվարի կողքին՝ ամբացնել նորը պողպատե ցցերից։ Աշխատում ելին յերկու խոչը կուան։ Աշխատում ելին ճիշտ ու արագ, ինչպես յերկու աժդահա տղամարդ։ Կուանը ցցերի կույտից վերցնում եր մեկը, բարձրացնում, ապա իջեցնում հատակին ու չողեմուրճով խրում գետին։ Հետո կրկին յետ ե դառնում և վերցնում մի ուրիշը։

Ժամը մեկին պետք ե վերջին ցիցը ամրացնելին։ «Ու հանկարծ՝ պատմում ե ինժեներներից մեկը, պաղպատե պատվարի մի մասն անջատվեց պատ-

նեշից ու սկսեց ներս ածել ջուրը, կտրտելով պողոստի թոկերը, ձողերը պատճեներից պոկելով և յատելից քաշ տալով ռելսերի ճանապարհը: Յերկու բողեյում՝ ջուրն ընկալ 170 մետր պատվարից: Բանավորներն ու ինժեներները սարսափով ելին նայում, չգիտելին ինչպես պահեն պատվարը: Բարերախտաբար ամբողջ պատվարը չքանդվեց, մի մասը, վորը պողպատե թոկերով ամրացրված երպատերին, մնաց: Իսկ մյուս կողմից պողպատե ուղարկվեց իր ամբողջ բարձրությամբ»:

527 ցից ջուրը տարառ, 500 տոնն պողպատ ջուրընկալ: Իսկ վորքա՞ն աշխատանք կորալ: Հայ թե ինչ: Ասում են, վոր պողպատի ցցերը թեք հատուկին ելին ամրացրած: Իսկ գետի համար, ի հարկե, դժվար չեր այդ թեք մակարդակից պո-

Մարտեկ ուղում ելին գետի առաջը կապել պողոստե պատերով, բայց գետը, առանց յերկար մտածելու, քանդեց պողպատե պատերը իրեն մի չին ցանկապատ: Այս անդամ արդեն չառ դժվար եր շտկել գետի քանդածը:

Պետք է ջրի միջից բարձրացնելին պողպատե պատվարը: Բայց հեշտ և առաջ՝ 500 տոնն: Ինչ պիսո՞ս բարձրացնել այլպիսի ծանրությունը: Վըճնեցին ջրի տակ կտոր-կտոր անել և մաս-մաս հա-

6. Կրակ ջրի տակ.

Պողպատե կտրել, են ել ջրի տակ: Դնեպրոստում այդ գործը լոչ վոք չեր կարող կատարել:

Վճռեցին լենինգրադից բերել տակ ջրանոռով պիներ: Սպառովինը կտրում ե վոչ վթե դանակով կամ ոզոտով, այլ գաղի բոցով: Զարմանալի բան է այդ բոցը. պողպատն այլրում ե և ջրի տակ չի հանդում:

Ջրասույլները մտան Դնեպրի հաստակը վառած պատրույգով և սկսեցին կտրաել պողպատի պատը: Տեղ մի քանի որ: Ապա պողպատի ցցերին կապեցին թոկեր: Բեռնանալի (բարժա) վրա դրին տասնմեկ սրտան և դուրս քաշեցին:

Ամբողջ յերկու ամիս գնաց այդ գործի վրա: Յեվ միայն սեպտեմբերի 10-ին պատն ուղղվեց, հետո արդեն կարելի յեր ջուրը գուրս թափել փոսից:

7. Յերեք բանվորական որը մի կոպեկ

Ի՞նչ է տալու մեզ Դնեպրոստրոյը, յերբ վերջապես Դնեպրը հաղթահարիի:


Դնեպրի վրա կառուցվելու յեն իննը տուրբին: Ամեն մի տուրբին ունենալու յե 90 հազար ձիու ուժի կարողություն: Իսկ ամբողջ Դնեպրոստրոյը 800 հազար ձիու ուժ:

Մի ուժեղ մարդու ուժ կարելի յե առել, վոր հայաստար է $\frac{1}{20}$ ձիու ուժի: Կնշանակե Դնեպրոստրոյը ավելի քան 16 միլիոն մետրնա բանվորի տեղ է բռնում: Յեվ այդ մեքենա-բանվորներն աշխատելու յեն չառ չին վարձու:

Պիտի՞ք թե Դնեպրոստրոյը ինչքանով ե բաց թողնելու ելեկտրոեներգիան: Մի կիլովատ ժամը

մի կոպեկով։ Իսկ ի՞նչ և մի կիլովատ ժամը։ Դա
մոտ յերեք ուժեղ բանվորի աշխատաժամն է։
Յերեք բանվորական որը մի՛ կոպեկ։ Ահա թէ
ինչ և նստելու ամեն մի մեքենա-բանվորի աշխատան-
քը։

Ուրեմն մեզ շատ ձեռնտու յե կառուցել ջրային
ելեկտրոկայաններ։ Յեվ մենք կկառուցենք։
Արդեն մեզանում գործում են հինգ մեծ հիգ-
րովայաններ՝ Վոլտովի (Լենինգրադի մոտ), Զեմո-
Ավճալայի, Յերևանի, Լենինականի և Կոնդոնովի
(Կարելիայում)։ Նրանք մեզ տալիս են 110 Հ. ձիու-
ուժ։ Շինվում են հինգ մեծ հիգրոկայան Դնեպրի,
Սվիբի, Ռիոնի, Գիգել-Դոնի և Զորագեսի։ Բո-
կում ենք յերեք մեծ հիգրոկայան կառուցել Կով-
կասում և Միջին Ասիայում։ Իսկ վորքան փոքր
կայաններ են շինվել ու դեռ շինվելու յեն։
Յեվ այդ մեր բոլոր հիգրոկայանները ամեն
տարի խնայելու յեն՝ 3-4 միլիոն տոնն ածուխ։



Նկ. 9.—Դնեպրոստրոյի շինքը։ Այստեղ դրվելու յե 9 տուրբին։
Աշ կողմից յերեսում ե ամբարտակի մի տառը։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

ՄԵՌԵԼՆԵՐԻՆ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ

1. Նոր Դոնիքաս

Վորտե՞ղ մենք շատ ածխահորեր ունենք։
Դոնեցի ավագանում։
Ի՞նչքան ածուխ եյին տալիս նրանք հնդամյա-
կի տաջին տարում։



Նկ. 10.—Հանքափորս ամբողջ ուժով փորում ե ածուխը կայ-
լայով։ Նա հանել ե բաճկոնը. չոդ ե. այդպիսի աշխատանքից
կարելի՞ յե չքրտնել։

27 միլիոն տոնն տարեկան։

Միայն այդքա՞ն։ Իսկ մեզ հնդամյակն իրացնելու
համար հարկավոր ե 75 միլիոն։


Սա ի՞նչ բան է : Մի՞թե սխալվել ենք : Յեթև սխալվել ենք, ապա պետք է հնդամյակը նորից կազմել, թե չե կստացվի մի այսպիսի բան . մենք կը մնենք գործարաններ, իսկ ածուխ չի լինի, և գործարանները կանոնականնեն, ամբողջ աշխարհի ծաղը ու ծանակ կդառնանք :

Վոչ, այդպիսի բան չի կարելի թույլ տալ : Ինչ ել վոր լինի, պետք է իրացվի ծրագիրը : Բայց ինչպես կատարել և արդյոք հնարավո՞ր է այդ բանը կատարել թե չե :




Նկ. 11.—Այս հանքափորի գործն անհամեմատ հեշտ է : Նա իր ձեռքին ունի ավտոմատ մուրճ : Ուստինք թաթմանից անցնում է խտացած ողը մուրճին և շարժում փականը, վոր առաջ է հրում դուրի սուր ծայրը : Հանքափորը միայն մուրճն և բռնում, իսկ աշխատում ենք մուրճը :

Ինժեներներն ասում են՝ կարելի յեւ . նրանք առում են, վոր շատ հանքահորերում աշխատանքը կատարված է ձեռքով, առանց մեքենաների : Նրանք ասում



Նկ. 12.—Զին դանդաղ քաշում և վագոնները :



Նկ. 13.—Ընդհատակյա վոլոցով արագորեն սլանում և հլերարողացքը : Հանքափորերի գլխարկներին ամրացրած են հլերարկան ճրագներ :

Են, վոր ամեն ամերիկացի հանքափոր հինգ անգամ առ
վելի ածուխ և հանում, քան մերը; Ի՞նչ ե, կարծում
եք ամերիկացի հանքափորը ավելի յեռանդո՞վ ե աշխա
տում: Վո՞չ, ի հարկե, ինդիբոր պարզ ե, ամերիկացի
հանքափորին ողնում ե մեջենան:

Մեղանում, դեռ շատ հանքահորերում, աշխա-
տանքը կատարվում ե հին ձեռվ, հանքափորը քանդում
ե ածուխը քլունդով՝ «կայլայով»: Իսկ Ամերիկայում
վաղուց արդեն մոռացել են, թե ինչ ե կայլան: Այսուղ
ածուխը հանում ե ծակիչ մեջենան:

Մեր հանքափորը ծակում ե ածուխը ձեռի շաղա-
փով, իսկ ամերիկացի հանքափորի աշխատանքը կա-
տարում ե ավտոմատ-մուրճը:

Մեր հանքափորը ինքը իրեն ձի լծում ե սահմա-
կին ու ածուխը հասցնում վագոնեաներին:

Իսկ Ամերիկայում ածուխն ինքն ե հոսում դույլե-
րով և, յերբ հասնում ե վագոնեաներին, բեռնամեքենա-
ների թիակները վերցնում և վայրկյանապես թափում
են վագոնների մեջ:

Մեր հանքահորերը դեռ մինչև որս ախոռներ են:
Կանգնած են ձիաները գլուխները կախ՝ հանդարտ, ա-
ռանց արկե լույս տեսնելու:

Իսկ Ամերիկայում վաղուց աշխատում են ձիու,
փոխարեն ելեքտրոքարչերը՝ տափակ, ինչպես գըր-
չահատը:

Արագ ոլանում են ելեքտրաքարշերը, տանում են
վագոնները ամբարձիկ պահեստարանը:

Մեղանում՝ հանքանձավիներում խավարի թագավո-
րություն, միայն յերեմնակի առկայօնում ե հանքա-
փորի աղոտ ճրագը:

Իսկ Ամերիկայում մշտական ելեքտրական լույս.
հանքահորը լուսավոր սենյակի նման: Յեկ նույն իսկ

հանքափորերի գլխարկներին միամի ելեքտրաձրագ:

Ինչո՞ւ մենք ել նույնը չմտցնենք մեզ մոտ: Ու
կմտցնենք: Մենք ել արդեն ունենք Ամերիկայից վոչ պա-
կաս հարմար հանքահորեր, արդեն աշխատում են ծա-
կել մեջենաներն ու ավտոմատ-մուրճերը:

Հնդամյակի վերջում միայն Դոնբասը ունենալու
յի 2500 ծակիչ մեքենա, 3500 կոնվեյեր, 30 հանքի ելեք-
տրաքարչ և 100 բարձող մեքենա:

Մենք վոչ միայն վերաշինում ենք հները, այլ և
բացում ենք նոր հանքահորեր: Հնդամյակի վերջում
ել չեմի հին Դոնբասը: Կունենանք նոր Դոնբաս:

2. Կատապենք մեռելներին աշխատելու

Ինչքա՞ն ածուխ ե տալու վերակազմված Դոնբասը
1932-33 թվական: 521/2 միլիոն տոնն: Իսկ մեզ ինչքա՞ն է
հարկավոր: Ամենաքիչը՝ 75 միլիոն տոնն: Այսպես թե
այսպես մեզ չի բավականանալու: Վորտեղից վերց-
նենք պակասորդ ածուխը: Հարցնենք հետախույզնե-
րին. նրանք ասում են, թե մենք ունենք մի նոր ավա-
զան ևս, վորի նկատմամբ Դոնբասը սոսկ թզուկ է:

Սիրիոս են գտնվում Ալթայի բարձր լեռները: Նը
րանց գագաթները ծածկված են հավերժական ձյունով:
Իսկ ստորոտներում ածում են հսկայական խիտ փշատե-
րեւ անտառներ: Գլխավոր լեռնազդթայից տարածվում
են ընդարձակ լեռնապարեր դեպի Սիրիոս և Կիրդիզի
տափաստանները: Այդ լեռների ստորոտներում գետնի
տակ գտնվում ե մեծ քանակությամբ ածուխ: Մի ժա-
մանակ այստեղ յեղել է ծովախորը: Ալթայի լեռների
փեշերը վողողում եյին ծովի ալիքները: Հսկայա-
կան ձարխոտներ ու ձիաձիտներ են ածում նրա յեղեր-

Քին: Նրանց մեջ վլսում ելին հսկայական զաղաններ յերկարալիք ու անմիտ փոքրիկ գլուխներով:

Ամեն մի գաղան չորս հարկանի տան չափ:

Բայց տարիներ անցան, գաղանները սատկեցին ծովը չորսավ, ծովախռըշի տեղ մնաց մի հսկայական ճահճ: Ճահճը ցամաքեց, ավազն ու կավը պախտերն ու ձիածխտները մնացորդները՝ ձարտակ, սևացան ու դարձան ածուխ: Ահա այդ գերեզմանցն ենք ուզում զնալ, դուրս հանել մեռեներին իրենց գամբարաններից ու ստիպել, վոր մեզ համար աշխատեն:

Վո՞րն է այդ ածուխի հսկան, վորի առաջ Դոնքառը մի թղուկ է:

Դա կուղասն է՝ Կուղնեցի ավաղանը: Դոնքառի ածուխի շերտերը բարակ են, այնտեղ կան շերտեր կես մետրանոց, դա շատ լավ է, իսկ Կուղասում 2 մետրանոց շերտեր հաստ չեն համարվում: Այստեղ կան նույն իսկ 16 մետրանոց շերտեր: Յեկ այդ շերտերն ել գետնի յերեխն շատ մոռ են, ու ածուխն ել ավելի լավ է:

Բա ինչո՞ւ յէ զործը կանգ առել, ինչո՞ւ ուշքերս չփառենք Կուղնեցի ավաղանին: Ու մենք ել դարձնում ենք մեր ուշքը նրան:


Դոնքառում արդյունահանությունը կրկնապատճենք, Կուղասում՝ յեռապատկում: Միայն մի բանը վատ և Կուղասում՝ գործը գեռ նոր է: Կուղասը դեռ ջահել է, այնտեղ և հանքահորերը քիչ են, և յերկաթուղիները քիչ են, և մեծ ելեկտրոկայաններ դեռ չը կան: Այն ինչ-մեկը մյուսի հետ կապ ունի: Ինչպես պետք և աշխատեն ծակել մերենաները, կամ ինչ-պես պետք և շարժվեն ելեկտրոգարշերը, յեթե ելեկտրոհոսանք չկան: Ուրեմն, ինչքան ել ցավենք, չենք

կարող Կուղասից այս հինգ տարվա մեջ վերցնել այն, ինչ նա կարող է:

Բայց մենք ի հարկե ելի շատ բան կանենք: Կուղասում մենք կունենանք ամենամեծ հսկայահորեր: Կոքսի №1 հանքահորը պետք է տա 2,5 միլիոն տոնն ածուխ, իսկ №2 հանքահորը ավելի ուետք է տա: մենակն առաջ յե 5 միլիոն տոնն ածուխ:

3. Հումույթ մաից ու վասկարներից

Ածուխը մեզ բավական է: Միայն մի բան կա, վորի մասին մենք չենք մտածել:



Նկ. 14.—Այնտեղ, ուր նախադարյան զաղաններն են թափառել, պետք կառուցվի ոլովզատե մի հրաշալիք: Նկարի վրա «կուղերն» ե, ածխահորի մի բուրգ: Եերբ ամբարձիկ մեքենան աշխատում է՝ վերսի անխոները պտտվում են: Այդ անիմերից ձգված է թոկ, վորից կախված են ամբարձիկ զամբյուղներ: Բուրգը շատ ամուր է, նա պետք է ածխով բարձրությունը դիմանա:

Վորտեղ մենք ավելի շատ գործարաններ ու Փար-
Աւկրայինայում:

Իսկ վորտեղ ե մեր ածուխը:
Բավական հեռու, հարավում՝ Դոնբասում և ա-

վելի հեռու՝ Սիբիրում, Կուզբասում:

Ուրախ ածուխ ստանում ե Կուզբասից, Ուկրայինան
Դոնբասից: Բա Լենինգրադն ու Մոսկվան ի՞նչ ունեն:
Այդպես հեռու, հաղարավոր կիլոմետր տարածության
վրա ածուխ տեղափոխէլ: Ի՞նչ կնատի միայն ճանա-
պարհը: Ահա թե ինչ հիմար բան և ստացվում: Ա-
ծուխը մի տեղ ե, գործարանները մյուս վայրերում,

ի հարկ ե մենք մեղավոր չենք: Մեղավոր են գոր-

ծարանատերերը, վորոնք գործարաններ են չինել ա-
ռանց վորեե պլանի:

Ասենք նրանք իրենց պլանն ունեյին, վորքան կա-
րելի յե շատ շահ վաստակել: Շատ հաճախ նրանք
գործարաններ շինում եյին վոչ այնակազ, ուր եժան հու-
մույթ կար, այլ այնակազ, ուր եժան ձեռքեր: Հե-
ղափոխությունից առաջ դյուլացիները քիչ հող
ունեյին, չեյին կարողանում ասպել, իրենց ձեռքի
ուժը պատրաստ եյին նչին գումարով ծախել: Ահա
և գործարանատերերը ոդուլում եյին այդ հանգաման-
քից և շինում եյին իրենց գործարանները մարդկային
հումույթի մուլց ու վոսկորներից կազմված հումույ-
թի մոտ:

Իսկ ածուխը: Նրանց ավելի քիչ ածուխ եր հար-
կավոր, քան մեղ: Նրանց ի՞նչ հաշվի եր շատ մեքենա-
տակար եր մեղ մոտ անողուտ, անձեռնոու յեր դառ-
նում: Յեկ դիտեր ինչո՞ւ: Վորովհետեւ յերկոտանի

մեքենան ալիելի եժան եր աշխատում: Բայց չե՞ վոր
նրանք ելի մեքենաներ ունեյին: Այս, ունեյին:

Բա ածուխը վորտեղից եյին ստանում: Ածուխը
բերել եյին տալիս արտասահմանից: Իրենց յերկրի
հսկայական ածուխը թողած-բերել եյին տալիս Անդ-
լիայից:

Դեռ ավելի վատ բան եյին անում-վայր եյին
վառում:

4. Կարելի յե՞ փայտ վառել

Ի հարկ ե վոչ փայտը վառելիք չե, այլ շատ ար-
ժեքալոր նյութ: Պետք ե ծառեր անկել և վոչ թե
վոչնչացնել: Ահա թե ինչ ե ասում բանաստեղծը արդ
մասին.

ի՞նչ ենք մենք անկում	ի՞նչ ենք մենք անկում...
ծառեր անկելով...	ծառեր անկելով...
կայմեր ու ձողեր	յերկնքի համար,
նավերի համար:	Դուռ ու պատուհան,
գերաններ անկում	նավակ ու սեղան,
շպալ բացնում	Գիրք ու լուսակեր
ձամբերի համար:	Ամենքի համար:

Մի տաս-տասնըհինգ տարի հետո վոչ վոքի մըտ-
քով չի անցնի այլպիսի արժեքավոր հումույթն այ-
րել: «Փայտ» բառը ուղղակի կմոռացվի:

Ապա ի՞նչ պիտի վառեն վառարանները: Վառա-
րաններ ել չեն լինի: Ինչպե՞ս մի՞թե կարելի յե ա-
ռանց վառարանների:

Վառարանների փոխարեն ամբողջ քաղաքում կը-
լինի մի մեծ ջերմակենորոն: Այդ ջերմակենորոնում
վառելու յեն վոչ թե փայտ, այլ ածուխ կամ տորֆ:

Այդտեղից խողովակների միջոցով կհաղոթվի տաք չուր: Այդպիսի չերմակենտրոն կա՝ որինակ՝ Լենին զբաղում: Շատ տներ իրենց տաքությունը ստանում են այդտեղից՝ խողովակների միջոցով:

5. Հանքահորեր Մոսկվայի շրջակայքում

Այստեղից պարզ յերևում է, վոր մենք, ուր հնաւելքով:

Իսկ ի՞նչ անեն լենինդրագի և Մոսկվայի գործարանները: Փայտ չի կարելի վառել: Գոնքասի ածուխը չեռու յէ: Զի՞ կարելի արդյոք հյուսիսում դանել մի այնպիսի վառելիք, վոր մասամբ գոնե փոխարինե Դոնքասի ածուխին:

Հարցնենք հետայրույշներին, տեսնենք ի՞նչ են առում: Հետախույզներն ասում են, վոր Մոսկվայի մոտ ածուխ կա:

Ածո՞ւխ, Մոսկվայի տա՞կ: Արդ ինչպե՞ս է, վոր չամար, վոր այդ ածուխը վատն է: Աչքից վրիպել է նրա կի ուշադրություն ել չելին դարձնում: Նա յերկու անդամ պակաս ջերմություն է տալիս, քան Դոնեցի ածուխը, իսկ կուղնեցի ածուխի հետ իսկի համեմատել չի կարելի: Սակայ այժմ ինժիներները դանել են այդ ածուխը ողտագործելու մի նոր ձեռնուու յեղադարձաներով: Յեկե նորից հարցնենք հետախույզը:

— Ճաշիճ, — պատասխանում են նրանք:
— Ինչպե՞ս թե ճաշիճ, ինչպիսի՞ ճաշիճ:

— Եյ, ճաշիճ, միայն տորֆային, — պատասխանում են հետախույզները:

Ե՞ս, ի՞նչ անենք, վոր տորֆային են: Հենց իլինդրին ել են ե, վոր տորֆը նույնպիս վառելիք ե: Յել վոչ ել վատ վառելիք: Միայն հարկալոր ե իմանալ նրան ողտագործելու ձեւ:

6. Տորֆը փրկեց Մոսկվան

1918 թվին Մոսկվան կտրված եր Դոնբասից: Ածուխ չեր ստացվում: Մոսկվայի ելեքտրոկայաններն այրում եյն իրենց վառելիքի վերջին մնացորդները: Միայն մի կայարան եր անընդհատ աշխատում և նայել փրկեց Մոսկվան: Դա «Ելեքտրոհաղորդիչ» կայանն էր, նա աշխատում եր տորֆով: Իսկ տորֆ Մոսկվայի շուրջը վորքան ուղեք:


Ու վճռեցին մի յերկրորդ տորֆային կայան կառուցել Շատուրում: 18 թվի զարնան ակտեցին Շատուրի ձահիճներում ջրանցքներ փորել, տորֆ քանդել: Բանվորներն ապրում եյին գետնափորերում, մինչև ծնկները ջրի մեջ աշխատում եյին, ջերմից ու մոծակից տառապելով: Բայց զործը ընթանում եր կարգով: Պիտերի (այժմյան Լենինգրադի) բալարիկ գործարանում զը տան մի տուրբոգեներատոր մեքենա, վոր հոսանք ե առաջնում: շողեկաթսան հանեցին «Նավարին» գրահանակից: գտան տորֆն այրելու մի նոր ձեւ: Անցկացրին Շատուրից Մոսկվա ելեքտրոթեկեր:

Ու հոսանքն անցավ Շատուրից: Վառեցին ճրագները Մոսկվայի փողոցներում: Կրկին դղրդացին դադոյաճները գործարաններով:

Տորֆը փրկեց Մոսկվան:

7. Կանաչ ածուխը

Կանաչ ածուխը՝ տորֆի աղատեց Մոսկվան։ Կառասի և այժմ, կնոպաստի հնդամյակի իրացմանը։ Զե՞լոր մենք տորֆի անհամար պաշտպաներ ունենք։ այդ կողմից առաջինն ենք աշխարհում։ թէ՛ լենինդրատանյակ կիլոմետր տորֆի ճահիճներ։ Մամուռ, մամուռակալած ծառեր, ջուր, վոլորուն, ցեխոտ ճանապարհներ-ահա ձեղ տորֆի յերկրի պատկեր։ Մենք պետք են նվաճենք նրան։ Այսոր առանց մեքնաների չենք կարող այդ անել։ Դեռ մինչեւ այսոր բահերով։ Դեռ մինչեւ այսոր ել տորֆը քանդում են առաջվա պես բահերով։ Դա մասնաւում է ածուխը մեղադաշտում հուն-



Նկ. 15.—Տորֆի ճահիճներով անցնում և եքսկավատորը, վորի յերկար պոչը կաղմած և շերեփների շղթայից։ Շղթան անընդահատ շարժվում է, վերցնելով տորֆը՝ բարձրացնում է վեր և այսուղի խողովակների միջով թափում վագննետը։


յում են վոտներով։ Վցում են տորֆը մի փոսի մեջ, լցնում են ջուրը, մտնում են շապկանց փոսը և հունցում են տորֆային իմուրը։

Այդպես մենք շատ հեռու չենք գնա։ Մեզ հարկավոր են մեքենական բահեր՝ եքսկավատորներ և մեքենական հունցողներ՝ կաղապարող մեքենաներ։ Ճիշտ է, եքսկավատորը ամեն տեսակի ճահիճի համար չե։ Կոճղաշատ ճահիճներում եքսկավատորները չեն կարող բանել։ Իսկ մեզանում ճահիճների մեծ մասն այդպես են։ Սակայն կոճղաշատ ճահիճների համար մեր ինժեներ կլսունոնը լավ միջոց է գտել։ Փախանակ քանդելու տորֆը, ինժեներ կլսասոնն առաջարկեց արամատների ու կոճղերի հյուսվածքները ցայել ջրի ուժեղ հոսանքով։ Շատ տարորինակ է նույնիսկ։ Մարդիկ անցնում են ճահիճով և ջրում են ճահիճը բրանդություններից (ջրմուղ մեքենա)։ Կարծես դա ճահիճ չե, այլ ասֆալտե մայթ։ Իսկ մարդկանց յետքից գալիս են յերկու կոան։ Մեկից կախված են տորֆաքաշը, մյուսից՝ պողպատի ժամիքները՝ դրեյֆերը։ Տորֆաքաշը բոնող կոանը գնում է նրա կողքից և պոկլուկում է ճահիճից կոճղերը, կարծես ունելիով գորշ բուրդ է պոկում։

Բայց տորֆ հանելը դեռ բավական չե. պետք է նրան չորացնել։ Տորֆը սպունդի նման ջուր և ծծում։ Ամենամեծ դժվարությունը հենց այդ է։ Կարգին չորացնել տորֆը շատ դժվար է։

Ի՞նչպես չորացնել։

Եինում են՝ տորֆից աղյուսներ և շարք-չոր
դարսում։ Չորացնում են արեն ու քամին։ Իսկ զբա
համար չատ ժամանակ և Հարկավոր։ Յել դե
բոլոր ջուրը չի անցնում։ Այդպիսի «ողով չորաց
րած» տորփի մի քառորդ մասը, ու յերեխի
ալելին՝ ջուր է։ Յեթե ձեր գործարանը բերել են



Նկ. 16. — Այս յերկաթե թաթով՝ զրերֆերով՝ կռանը պոկուսում
և ճահճի կոճղերը։

100 վակոն «ողով չորացրած» տորփ, նշանակում
է, վոր դուք ստացել եք միայն 75 վագոն վառե-
մեք, իսկ 25 վագոն՝ ջուր։ Բայց ի՞նչ ոգուտ վա-
ռարանը ջրով վառել։ Ի՞նչ միուք ունի ջուրը յերկա-
թուղով տեղափոխել։ Պետք է տորփը չորացնել

արհեստականորեն։ Այս գործորին և կարեռը խրն-
դիրը, վորի համար շատերն աշխատում են։
«Ելեքտրոհաղորդիչ» կայանին կից չինված և մի
փորձնական գործարան՝ արհեստականորեն տորփ
չորացնելու համար։ Այդ գործարանում արդեն
սովորել են, թե ինչպես տորփը վերածեն աղյուս-
ների կամ ինչպես ասում են բրիկետների և տոր-
փային փոշու։

Գուս-խրուտապալի առակե գործարանում այլ
կերպ են վարվում։ Այստեղ տորփը վերածում
են գաղի։ Այդ գաղը խողովակներով մղում են դե-
պի գործարանային վառարանները։ Այս միջոցը
անհամեմատ լավ է։ Գաղը չատ հիանալի յե վաս-
վում։ Նրան կարելի յե հարյուրավոր կիլոմետ-
րեր խողովակների միջով տեղափոխել, և այդ ավելի
էժան և նստում, քան յերկաթուղով տեղափոխելը։
Մասդրություն կա՝ Մուկվայի բոլոր գործարաննե-
րը անցկացնել տորփային գաղի։ Տորփային գաղը
բանեցնելու յե Նիժեգորոդի ավտոգործարանը,
Սորմովի գործարանը, Ուրալի մեքենակառույց
գործարանները։

8. Նավթի լիակներ

«Ոդը չափից դուրս հեղձուցիչ եր. հազիվ ելի
հազս պահում։ զդում ելի ինձ թունալորված։
Թափառելով նավթապատ վիշկաների անտառում,
յես տեսնում ելի նրանց արանքում սև-կանաչավուն
հեղուկի լճակներ։ Այդ լճակները թվում եյին
անհատակ։ Գորչ ձեթը ցնցուղել ու պատել եր գե-
տինը, մարդկանց, ամեն ինչ. կանաչավուն լճակնե-

րըն առես ներկած լինելին . ավազը վոտքերի տակ
վոչ թե ճքճքում եր, այլ կպչում եր» :

Այդ ո՞վ և պատմում : Այդ վորտեղ ե, վոր
նավթը ջրի պես թափում են գետին :

Պատմում ե Գորկին : Նա պատմում է վոչ թե
ներկա որերի մասին, այլ այն մասին, թե ինչ եր
կատարվում Բագվի նավթահանքերում նախկին
տերերի որով : Այն ժամանակ նավթը չելին խնա-
յում : Պահում ելին վոչ թե փակ յերկաթյա նավ-
թամբարներում, ինչպես այժմ, այլ ուղղակի դու-
քերում : Նավթը հորերից քաշում ելին դույլերով՝
«Ժելոնկաներով» : Նավթը դուրշիանում եր, բեն-
դինը կորչում անվերադարձ : Բայց նավթատերերի
հոգը չեր բնակ : Նրանց միայն հետաքրքրում եր՝
վորքան կարելի յե շատ նավթ հանել և շատ ծա-
խել : Ինչու՞ փող ծախսել թանգարեք նավթամ-
բարների, պատասահմանյան մեքենաների վրա, քա-
նի վոր կարելի յե հեշտ հարստանալ, կարճ միջո-
ցում դառնալ միլիոններ : Վերցրո՞ւ, քաշիք, թա-
ել նավթ չտա, ինձ ի՞նչ :

Այսպես դատել մենք չենք կարող : Դրա հա-
մա՞ր խեցինք նավթը կապիտալիստներից, վոր
նավթը չաղ տանք գետնին անոգուստ տեղը :

Վ՞ո՞չ . մենք գործը պետք ե կարգալորենք
ինչպես հարկն ե : Շինենք նավթամբարներ, նավ-
թը քաշենք մղիներով և վոչ թե դույլերով : Բո-
լորովին ձեռնոտու չե մեղ բենզինը կորցնել . նա
րիներին :

9. Յերկարե «ուխտավորները»

Մենք արդեն արտասահմանից գնել ենք բար-
մաթիվ որորվող մղիներ (նավթահանքերում ան-
վանում են նրանց «ուխտավորներ») և այլ մեքե-
նաներ : Իսկ այս հնդամյակում ավելի շուտ ենք
գնելու :

Մ . Գորկին վերջերս նորից յեղել և նավթա-
հանքերում և, ինչպես գործ է, անձանաչելի յե դար-
ձել :


«Նավթահանքերի ընդարձակ տարածության
վրա չաչ ու շառաչով սողոսկում են յերկաթե փո-
կերը . վիշկաների թիվը չափազանց պակասել ե .
ամեն տեղ որորվում են անձունի «ուխտավորնե-
րը», համարյա անձայն ծծում են նավթը գետնի
խորքերից : Փայտե տնակի մեջ պտտավում ե հարթ
մակարդակի վրա քիմիական չարժիչը, ամեն կողմ
տարածելով սարդանման յերկար յերկաթե թաթե-
րը . . . Սև, յուղակարած բանվորներ վոչ մի տեղ չեն
յերեւում . . . Զի լավում վարչության կանչերն ու
գոռզողոցը, միայն ծվում ծվծվում են յերկաթե
փոկերը, ու որորվում են գետնին «ուխտավորները» :

Հինգ տարվա ընթացքում մենք նավթի արդյուն-
նահանություններ հասցնելու յենք 26 միլիոն տոննի .
իսկ հնդամյակի ակզրին մեք արդյունահանեցինք
միայն 12 միլիոն (տոնն*) : Մենք նավթը չենք վա-
ռելու, ինչպես անում ելին առաջ : Մենք լավ գի-
տենք, վոր նավթը վառելիք չե : Նավթը հումությ
է : Նրանից մենք կստանանք բնողին՝ սավառնակնե-
րիներին :

*) Բագվի բանվորների հերոսական ջանքերով նավթի հըն-
դամյակին ալարտվեց 2 և կես տարում :

ըի և ավտոմոբիլների համար, կերասին (ապիտակ նավթ) տրակտորների համար:

Հարկավոր դեմքում անհրաժեշտ է վառել վոյ թե հում նավթը, այլ նրա մնացորդները՝ մաղութը: Մաղութն այս մնացորդն է, վոր ստացվում ե բենզինն ու կերասինը հանելուց հետո: Բայց մաղութը վառելն ել հարկավոր • չե: Արդեն գտել են այնպիսի միջոց, վոր բենզին հանում են վոչ միայն հում նավթեց, այլև մաղութից: Հնդամյա պլանութից բենզին հանելու համար: Բայց սրանից մաղութից ստանում են նաև մեքենայի յուղ: Իսկ



Նկ. 17.— Հնդամյա պլանութիւնը մենք ածուխի տարեկան արդյուն լին տոննի: Այժմ այդ պահանջը մեծացրած հասցրած և մինչև 125 միլիոն տոննի:

մեքենայի յուղ մեկ շատ է հարկավոր: Այնուհետ վոյ մենք ամրող մաղութը չենք այրի, այլ կայլենք միայն նրա մնացորդը:

Գլուխ գեցերութ:

ԵԼԵՔՏՐԱԿԱՆ ՅԵՐԿԻՐԸ

1. Ի՞նչ տարբերություն ածուխի և բարի միջև

Մեր մեքենաներին եներդիա հասցնելու համար մենք փորում ենք խոր ածխահորեր, կանունեցնում ենք ամրաբակներով ջրի հոսանքը, ճահիճներից տորֆ ենք հանում և գետնի խորքերից նավթ ենք քաշում:

Բայց այդ բավական չե:

Վառելիք հանելը միայն գործի կեսն է: Այդ միենուն ե, թե մի իր վերցնել մի տեղից և դնել մյուս տեղը: Յեկը ուրիշ վոչինչ: Դնչ ոգուս մեղ, յեթե ածուխը անդործադրելի մնա: Դրա համար հոչենք հանում ածուխը, վոր անդործ մնա: Ածուխը հանում ենք նրա համար, վոր գործ անի, աշխատի: Ինչպես ստիպենք նրան աշխատելու, յերբ նա անշարժ լնկած ե դետնին: Զրի բանը հեշտ է: Զուրը հոսում է: Դիր հոսանքի առաջ անխիներ՝ տուրբինը, և գործը պատրաստ է, ջուրը պատեցնում ե անիվները: Իսկ ածուխը նույնական անշարժ է, ինչպես և քարը:

Բայց մեծ տարբերություն կա ածուխի և քարի միջև: ածուխը վառվում է, քարը վոչ: Ածուխը կարելի յե այրել չողեմեքենայի տակ ու գոլորշի ստանալ:

իսկ գոլորշու հուանքը, ինչպես և ջրինը, կարու
ե շարժել տուրբինների անխվները: Գոլորշին կա-
րող է շարժել շողեմեքենայի միոցը:

Ուրեմն, ի՞նչ է ստացվում: Բավական չե ա-
ծուխ ստանալը, պետք է շինել նաև մեքենակայան-
ներ շողեկաթսաներով, շողեմեքենաներով և տուր-
բիններով:

Վորամ՝ կառուցենք այդ կայանները:
Կարելի յե, ի հարկե, կառուցել ամեն մի գոլ-
ծարանում մի մեքենակայան:

Կարելի յե նաև կառուցել մի հոկայական կա-
յան՝ ասենք հարյուր, յերկու հարյուր գործարանի
համար:

Վո՞րն է ձեռնաու ձեր կարծիքով:

2. Մեջը, քե՞ հարյուրը


Իմ կարծիքով մի մեծ կայանը շատ ավելի
ձեռնուու յե, քան հարյուրավոր փոքրերը:
Մի մտածե՞ք. փոքրիկ կայանների համար
պետք է կառուցվի հարյուր շինություն, իսկ մե-
ծի համար՝ միայն մեկը:

Փոքրիկ կայաններին պետք է կառուցվի հար-
յուր յերկաթզային ճյուղ՝ ածուխ մասուկարա-
րելու համար, իսկ մեծի համար՝ միայն մեկը:

Փոքրիկ կայաններին հարկավոր կլինի դեմք,
ասացինք, հարյուր փոքրիկ շողետուրբին, իսկ
մեծ կայանին բավական ե միայն մեկ տուրբինը:
Այս տուրբինը, ի հարկե, հարյուր անգամ ուժեղ
է լինելու, քան փոքրիկ տուրբինները: Բայց այդ չի
նշանակում, թե նա հարյուր անգամ մեծ և ծանր է
լինելու: Ամենամեծ տուրբինը՝ տաս հազար ձիու-

ուժանոցը՝ շատ քիչ տեղ է բանում, կարող է տե-
ղավորվել մի սենյակում:

Ծառայողների թիվն ել մեծ կայանում անհամե-
մատ քիչ կլինի, քան բոլոր փոքր կայաններում:
Չե՞ վոր միեւնույն ե՝ բանվորը մեծ մեքենային է
հետեւում, թե՞ փոքրին:



Նկ. 18.—Այս գծերով հոսանքն անցնում է «կրասնի Ռկուտը»
կայանից: Սկ շղթաներն առանձնացիչներ են: Յեթե այդ
շղթաները չինեն՝ հոսանքը կանցնի կայմերի մեջով դեռնին:

Թերեւս մեծ մեքենային հետեւելը շատ ավելի
հեշտ է. մեծ կայաններում շինում մն զանազան
հարմարություններ նորոգության, ածուխ, մոխիք
զատարկելու համար: Իսկ փոքր կայանում այդ ա-

մենը հնարավո՞ր ե ստեղծել։ շատ թանդ կնսուի։
Աչա թե վորքան առավելություններ ունի մեծ
կայանը փոքրի հանդեպ։ Միայն մի առավելությունը
թողի վերջը։

Ապա խմացեք՝ վո՞րն ե այդ։
Յեթե չխմացաք՝ յես կբացատրեմ։
Փոքրիկ կայանները վորտեղ ենք կառուցելու։
Ի չարկե գործարաններում։

Իսկ մեծ կայանը մենք կկառուցենք մեր ուղած
վայրում։ Իսկ վորտեղ ավելի ձեռնուու ժե, ի՞նչ եք
կարծում։

Ի հարկե այնտեղ, ուր վառելիք կա։
Տորֆային կայանը կառուցենք տորֆի ճահիճ-
ներում։ ածխային կայանը այնտեղ, ուր շատ ա-
ծուխ կա։ Պարզ ե, չ։ Վիճելի վոչինչ չկա։ Ինչո՞ւ
ածուխը կամ տորֆը տեղափոխել յերկաթուղթով,
յերբ կարելի յե տեղն ու տեղը վառել վերածել նր-
անց ելեքտրական հոսանքի և ուղարկել մեր ուղած
վայրը՝ բոլոր մերձակա գործարանները։

Այսպիս կարելի յե հոսանքն ուղարկել միայն
500 կելումետր հեռու։ Իսկ ապագայում մենք կաշ-
խատենք հոսանքն ավելի հեռու տեղափոխել։

3. Գործարանների միությունը


Վեցրեք կարկենը, գծեցեք մի շրջան՝ տրամա-
տիծը 500 կելումետր։ Յեթե կենտրոնում կառուցեք
մի մեծ ելեքտրոկայան, նա եներգիա կհաղորդի շըր-
ջանի ներսը գտնվող բոլոր գործարաններին։

Ի՞նչ կստացվի։
Կատացվի գործարանների միություն։ Իսկ նրա
սրտում՝ ելեքտրոկայան։

Հնգամյա պլանով մենք կառուցելու յենք 42
ույանական ելեքտրոկայան։ Ամեն մեկը նրանցից
դառնալու յե գործարանների միություն՝ «կոմբի-
նատի» կենտրոնը։

Ամենամեծ միությունը լինելու յե Դնեպրի մոտ՝
Դնեպրոստրոյի շուրջը։

Նայեցեք գծադրին։



Նկ. 19. — Գործարանների միությունը Դնեպրում։

Կենտրոնում՝ ելեքտրոկայանների շուրջը՝ մե-
տաղածուլական հախճապակու, ցեմենտի, քիմիական,
նավակառույց ալյումինի և այլ գործարաններն են։
Ելեքտրոկայանը բոլորին ել հոսանք և մատակարա-
գութեալականը

ըում : Նա ամենքին ողնում ե : Գործարաններն ել փոխադարձարար ողնում են միմյանց :

Մետաղաձուլարանում, հնոցավառարաններու ստացվում ե այրվող գազը : Այդ գազերը մետաղագործարանին պետք չեն և նա տալիս ե ցեմենտի ալյումինի, հախճաղակու գործարաններին :

Հիշում եք, մենք հաշվեցինք, վոր Դնեպրոստրոյը մեկ տալու յե 16 միլիոն մեքենա-աշխատավորների բանակը անդործ չի մնալու : Մենք նրանց կհարկադրենք համել չուղուն, ալյումին, պողպատ, շինելու նապեր, թրծել, ցեմենտ և հաճախակի, արդյունահանել քիմիական նյութեր և պարարտիչներ գաշտերի համար, լուսավորել քաղաքները, վոռոգել դաշտերը :

Դնեպրի կոմբինատում ամեն մի բանվորի ողնելու յե 700 մեքենա-աշխատավոր :

Յել այդպիսի կոմբինատներ մենք կառուցելու յենք ամեն մի մեծ ելեկտրոկայանի շուրջը :

4. Ելեկտրական յերկիր

Ապագայում բոլոր կոմբինատները մենք պետք են միացնենք մի ընդհանուր ելեկտրացանցով : Առաջն հերթին ելեկտրաթելեր անց ենք կացնելու Դնեպրոստրոյից - Դոնբաս . Դնեպրոստրոյն ու Դոնբասը յեղբայրական ձեռք են մեկնելու իրար : Յերբ Դոնբասին հարկադրովի հոսանք, Դնեպրոստրոյը կհասցնի . Դնեպրոստրոյին հարկադրովի, Դոնբասը կհասնի նրան ողնության : Իսկ նման բան կպատճի ամեն

գարնանը, յերբ գետերը վարարում են, գետնի տակը ջրերն ել սկսում են կատաղել՝ լցվում են ած-

խահորերը : Գլշեր - ցերեկ աշխատում են ելեկտրամղիչները՝ ածխահորերից ջուր են քաշում : Հենց վոր մղիչները կանգ առնեն, նորից հորերը կցվեն ջրով : Ինչ խոսք, վոր Դոնբասին այդ ժամանակ հերեթ չի անի իր հոսանքը, նրան խստ կհարկավորվի հավելյալ հոսանք : Իսկ այդ ժամանակ Դնեպրը վարած, վառաւ ջուր ունի, բոլոր տուրբիններն աշխատում են, հոսանք ինչքան ասես : Ահա հենց այդ ժամանակ Դնեպրը կարող ե ողնել Դոնբասին, կուղարկի հոսանք նրա մղիչներին :

Իսկ յերբ ջուրը կիֆնի, տուրբիններին ջուրը հերեթ չի անի և Դնեպրի գործարանների հոսանքը կպակասի՝ Դնեպրոստրոյից իմաց կտան Դոնբասին :


Ողնեցե՞ք :

Յեվ հակառակ կողմից կսկսի անցնել հոսանքը Դոնբասի կայաններից - Դնեպրի գործարանները : Զե վո՞ր Դոնբասի կայաններն աշխատում են ածուխով :

Բայց դա միայն սկիզբն ե : Կտա ժամանակ, յերբ մենք ամբողջ յերկիրը կդարձնենք ելեկտրոնկայան : Քաղաքում արգեն ելեկտրականությունը հաղթանակել է, հերթը գյուղին ե : Լույսը առանց կրակի, մինի, պայծառ, անվտանգ ու համահավատար կվառվի գյուղական փողոցներում : Հաղարավոր ժամեր կմիւ ելեկտրական ճրագը ձմեռվա, աշնան խավար դիշերներից : Գյուղացին ավելի շատ ժամանակ կունենա կարգալու :

Իսկ մի տասնհինգ-քսան տարուց հետ ելեկտրականությունը կդառնա այնքան անհրաժեշտ, վորքան և ջուրը, ողը : Ամեն մի վարկյան կարող ե ստանալ եներգիա, լույս, ինչքան ցանկանա : Գործարաններում, դաշտերում կաշխատեն ելեկտրական

ՅԵՔԵՆԱՆԵՐԸ : ԵԼԵՔՏՐԱԿԱՆ ԳԻՆԱԳԸՆՆԵՐԸ ԿՈՂԱՆԱ
ՀԵՐԿԱԾՈՆԵՐԸՆԵՐԸ : ԵԼԵՔՏՐԱԳՈՒԹՅԱՆՆԵՐԸ ԿՈՂԱՆԱ
ՀԵՐԿԵԼ ԴԱՀՄԵՐԸ : ԵԼԵՔՏՐԱԿԱՆ ԿՈՄԲԱՅՆՆԵՐԸ ԿՀԱՊԼ



Նկ. 20. — ԵԼԵՔՏՐԱԼԵՆԵՐԸՆԻ 4,4 անգամ կամերայու 5 տարվա
ընթացքում : Հնդկամյակի սկզբում ամեն մի գործարանային
բանկոր ուներ 33 մեքենա-ոչնական, իսկ հնդկամյակի վերջում
կունենա 70 մեքենա-ոչնական :



ՔԻՆ ԵԲՐՔԸ : ԵԼԵՔՏՐԱԿԱՆ ավտոներով բանվորները
ԴԱՐՁԻ ԿԵՐԾԱՆ :

Ամեն տեղ՝ փողոցում, տանը, գործարանում
կոկոն աշխատել անձայն, արագաշտում, ուժեղ ե-
լեքտրական սպասավորները :

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ԱՐՇԱՎԱՆՔ ՄԵՏԱՂԻ ՀԱՄԱՐ

1. Ապագայի քանգարանը

Կան անցյալի թանգարաններ, ուր պահպամ են
պեղումներից զտած իրեր : Ահազին պահարաններում
վրապես դամբարաններում հանգիստ քնած են կայ-
ծանկարի հրացանները, բրոնզի կացինները, փայտա-
նիլ կառքերը, կոթավոր կճուճները, թանգարին քա-
րերը՝ իրենց հատուկ քանդակներով : Կան և ուրիշ
թանգարաններ – ժամանակակից թանգարաններ :

Բայց ապագայի թանգարաններ մինչև որս չեն
յեղել : Իսկ այժմ այդպիսի թանգարան գոյություն-
ունի Անցնենք Լենինգրադ . Ֆոնտանկա, Զերնիշովի կա-
մուրջը : Այստեղ գուք կդանեք մի մեծ տուն, բաց
գույնի քարերից շինված : Բարձրացեք սանդուխով,
անցաթերթ վերցրեք պարետից : Այդ անցաթերթով
համարձակ առաջ անցեք :

Առաջին գահին գտնվում գուք կտեսնեք հարյուր գծա-
գրասեղաններ, գուցե և ավելի : Ամեն սեղանին դուք
կդանեք վատանե ահազին թերթեր, կարկիններ,
գծաղործիքներ, մատիտներ, անկյունաշավիեր, ույս-
ֆերիններ : Սեղանների մոտ կանգնած ու նստած աշ-
խատում են գծաղիքները : Գծաղիքների մի ամբողջ

բանակ : Վերևից՝ առաստաղից ընկնում և դժաղի՛
ներին կաթնագույն լույսը :

Դա գեռ թանգարանը չե : Գնացեք առաջ :

Թանգարանը ձախ կողմն և, փոքր դռան յետել :
Ներս մտեք, միայն զգույշ : Հանկարծ կարող և
վունկատակ անել Ուրալի Լենաշղթաները, քարու
քանդ անել Ներքին - Տաղելի գործարանը, այլիր
յերկաթուղային հողաթումը :

Զեր առաջ հատակի վրա ձգված ե մի ահագի՛
ույլեփ քարտեղ, - յերկագնդի մի հատվածը չա-
փաղանց փոքրացրած ու հատակին ամրացրած:
Թղթից պատրաստած կանաչ բլթակներ, ուելսերի վրա
ձգված յերկաթուղային պատիկ կամուրջիկ, ստվարա-
թղթից պատրաստած գործարանային շինություն-
ներ : Կողքին մի ցուցափայու՝ վրան մակագրած-
«Ներքին - Տաղելի գործարանը» :

Զույցությամբ թողեք ներքին - Տաղելի կործա-
րանը և անցեք առաջ : Աչա ձեզ կաղակստանը:
Զույց, շուս չտաք պատիկ կպցրած սեղանիկը և
չարդեք Ռիդդերի ցինկ-արձճային հանքավայրը :

Այդ հանքավայրը ամբողջապես շինված և ապա-
կենարից : Յեթէ ներքեւից վառեք ելեքտրական ճրա-
շիջանցքները, զբուղելի բոլոր հարկերը, բոլոր գետնափոր-
րը, ողափոխները : Այդ ամենը տույզով նկարված և
ապակե թերթերի վրա : Վորքան թերթ, այնքան ել
հարկ :

Կաղակստանից - նորից Ուրալ : Ծանապարհին
կանդ առեք ու լավ դիտեցեք յերկարկանի բանվո-
րական տունը : Այդ տունը դրված և դահլիճի մեջ
տեղը՝ մի բարձր պատվանդանի վրա : Տան մի պատը
բաց և այնպես, վոր կարող եք լսով տեսնել, թե ի՞նչ

և կատարվում ներսում : Մենյակները լուսավոր, մա-
քուր : Մահճակալներին բարձեր, վերմակներ : Իսկ
ամբողջ մահճակալը մատիտից յերկար չե, կարելի
յի դրանը դնել :

Անցնում եք առաջ : Պատից կախված ե մի ա-
չազին պատկեր : Մետաղաձուլարան և այդ : Կոկսի
վառարանների մի շաբան : Վառարանների դիմին առ-
ծուխի անձունի աշտարակներ, նման բերդի աշ-
տարակներին : Հնոցի վառարաններ՝ թեք, պողպատե
կամրջներով : Իսկ հեռուս լույսի ճառագայթներով
վորովիլած մի քաղաք, ասես մեկը կանոնչ բլթակ-
ների վրա գրել ե մի ահագին հովհար : Տակը գրված
մի ցուցատախտակ, վրան գրած՝ «Մագնիստագործ
գործարան» :

Այսպիսի պատկերներով գարդարված են թան-
դարանի բոլոր պատերը, այստեղ և և՝ Տելրեսսի գոր-
ծարանը, և՝ Դնեպրի կոմբինատը, և՝ Ստալինգրադի
տրակտորի գործարանը, և՝ Ռաստովի սելմաշը :

Բայց ամենահետաքրքիր բաները գտնվում են
ապակու տակ, արկղներում : Այդ արկղներում պահ-
պում են կառուցվող գործարանների գծագրեր, հա-
շիվներ, թվեր, թվեր, թվեր :

Յեթէ չլինեն այդ թվերը, չեն լինի և գործարան-
ները : Ի հարկե, այստեղ գտնվում են միայն ամենա-
գլխավոր գծագրերը : Միայն Մագնիստագործ գոր-
ծարանի համար կազմված են 30 հազար թերթ գծա-
գրեր : Ի՞նչ թանգարան և այդ, ինչպես և կոչվում նա :
Դա Գիլպրոմեղն ե՝ նոր մետաղաձուլարաններ նա-
խագծով պետական ինստիտուտը :

Գիլպրոմեղում առավոտից մինչ յերեկո յեռում
և աշխատանքը : Հաղարավոր ինժիներներ հաշվում
են, գծում ու նորից հաշվում : Այստեղ կան տուն

կառուցողներ, նաև կառուցողներ, ածուխի մաս
նաղետներ և պողպատի մասնագետներ, լեռնահան
քի ինժիներներ, դեսի ինժիներներ, ողի ինժիներ
ներ: Անցած տարում նրանք վերջացրին հարյու
րթ գործարանի հաշվիները, այս տարի նրանք աշ
խատում են հարյուր յոթանասուն գործարանների
վրա: Այդ գործարանները փոքր չեն: Նրանց մէ
կան հսկաներ: Այդ հսկաների կառուցվող բանվորա
կան տները միայն քաղաք են հազարավոր տներով,
տասնյակ փողոցներով: Ամենամեծ գործարաննե
րից իննը յերկաթ են արդյունահանելու: Միայն ի՞ն
ը ավելի շատ յերկաթ են արդյունահանելու:
Քան բոլոր հին գործարանները միասին վերցրած:
Յոթը գործարանը վրանցից քիչ փոքր են: Այս գոր
ծարանները մեղ տալու յեն տրակտորներ, ավտո
մոբիլներ, վագոններ, կոմբայններ, տուրբիններ, ե
լեքտրոմատորներ: Այդ գեռ ամենամեծերը. իսկ վոր
քան են մյուսները: Յեկ այդ բոլորն ել ծնունդ են
առել գիպլումեզում: Գիպլումեզի տունը ֆոնտան
կայում այդ գործարանների վորեւ մեկի համեմա
տությամբ մի վողորմելի անակ ե սոսկ: Բայց մի՛
թե շատ տեղ ե հարկավոր մարդկային մտքի համար:
Հաճակավոր դյուտերը, ծնունդ առնելով մարդ
կային ուղեղներում, զրի յեն առնվել թղթի կտոր
տանքների վրա: Քիմիայի ու ֆիզիկայի բոլոր հիմ
նական որենքները կարելի յե ամփոփեյ մի գրքում
և այդ գիրքը գրպանը գնել: Բայց մարդ, իմա
նալով այդ որենքները, կարող ե կառուցել հսկա
յական շնություններ, կառուկտոր անել լեռ
ներ, քաղաքներ փորել դեսի տակը:

2. Ինչու համար հսկաներ

Սակայն ինչ՝ու անպարման հսկաներ: Հենց մի
դուխ լսում ենք՝ հսկա գործարան, հսկա խորհու
տներ (սովորող): Խելքերը կորցրել են հսկաների
համար, ինչ ե: Գուցե փոքր գործարաններն ավելի
ձեռնուու յեն: Փորձենք, ստուգենք:

Իսկապես, ինչու համար են հսկա-գիրանտ գոր
ծարանները:

3. Յի՞քը պետք ե ոգտվել բազմապատկման ա ռյուսակից.

Լուծեցեք մի այսպիսի խնդիր: Յերկու գործա
րան կա: Մեկը փոքր, մյուսը՝ հարյուր անգամ մեծ:
Փոքրը մի ժամում այրում ե 80 կգ. ածուխ. մեծ
գործարանը մի ժամում վորքա՞ն կայրի:

Յես գիտեմ, թե դուք ինչպե՞ս կվճռեք այդ
ենդիրը: Դուք կվերցնեք 80 և կբազմապատկեք 100-
ով, կսուցվի 8000. պատասխանը կմինի՝ մի ժամում
8000 կգ.:

Ճի՞շտ ե արդյոք:

Վոչ, հազար անգամ վոչ:
Մեծ գործարանը մի ժամում այրում ե մինչև
1000 կգ. ածուխ:

Ինչպես, ինչու:

Իսկ բազմապատկման աղյուսակը՝
Բազմապատկման աղյուսակը այստեղ պետք չե:
Այստեղ բոլորովին չպետք ե ոգտվել բազմապատկ
ման աղյուսակից:

Բանն այն ե, վոր մեծ գործարանն ունի 2000
ուժանոց մեծ շոգեմեքնա, իսկ փոքրը միայն՝ 20

ուժանոց։ Մեծ մեքենան հարյուր անդամ ուժի
է, բայց վոչ հարյուր անդամ մեծ, հարյուր ան-
դամ բարձր։ Ածուխ ել հարկավոր և վոչ հարյու-
ր անդամ ավելի, այլ միայն տասներկու անդամ։ Մեծ
մեքենան ավելի ձեռնոտու յէ, քան փոքրը։

4. Կիլոգրամի համար ձեռքեր, տոնի համար
կուսիներ

Փոքրիկ գործարանին ել պետք է ածուխ հասց-
նել, մեծ գործարանին ել։ Միայն մեծ գործարանի
հարկավոր են տոններ, իսկ փոքրին՝ կիլոգրամ-
ներ։ Կիլոգրամները կարելի յէ ձեռքով տեղափո-
խել, իսկ տոնների համար անժրաժեշտ են ամբար-
ձիկ կուսներ։

Փոքրիկ գործարանում ամբարձիկ դնել՝ վո՛
մի միտք չունի. վերցրու և տար։ Խոմ չենք կա-
րող մեր սենյակում դերքը սեղանից դարակ տեղա-
փոխել ամբարձիկով։ Այլ բան և մեծ գործարանը։
Այստեղ առանց ամբարձիկի, միանույն եթե առանց
ձեռքերի։ Յեթե ամեն ինչ այստեղ մեջքով կրելու լի-
նենք, ինչքա՞ն ժամանակ և աշխատանք ե կորչելու։
Շատ անդամ բեռը չենք կարող բարձրացնել, ինչքան
ել ջանք թափենք։

Հետեապես մեծ գործարանը ավելի ձեռնոտու յէ
նաև նրանով, վոր այստեղ հաշիվ ե ընել ամբար-
ձիկ կուսներ և այլ հարմարություններ։

5. Մետրերին վոտներ, կիլոմետրերին շոգեշարժեր
Հասկա տարածությունը։ Փոքրիկ գործարանը
կարելի յէ մի ըստ բարձրությունը։ Փոքրիկ գործարանը
ամբանը յերբեմն մի մեծ քաղաք է։

Փոքրիկ գործարանում վոչ վոք իր քայլերը չի
հաջում։ Իսկ մեծ գործարանում մի փորձեցեք վա-
գոնները մի ծայրից մյուսը տեղափոխե՛լ։
Պարզ հաշիվ ե՝ շպալներ ու ոելոններ դնել, շար-
ժողության մեջ դնել շոգեշարժերը, ելեքտրոքար-
շերը, ելեքտրոսայլերը։ Մետրերին վոտներ, կիլո-
մետրերին շոգեշարժեր։

6. Մի հազարը մեծ ե յերկու հազարից

Ուրեմն պարզ է, ինչ կողմից ել մոտենալու լի-
նենք, մեծ գործարանն ավելի ձեռնոտու յէ։ Մեծ
դորձարանի մեքենաներն ել համ մեծ են, համ ավելի
լավն են։ Սակայն մեծ գործարանում կան բաներ,
վոր շատ քչերն են նկատում։ Մեծ գործարանում
ավելի կարդ ու կանոն կա։ Ամեն մարդ դիտի իր
դորձը։ Մեկը խարտոցում է, մյուսը սրբում գոր-
ծիքը։ Մեկը պատուակն ե ամրացնում, մյուսը
բոլոր հարվածում։

Իրերն իրենք են մոտենում մարդկանց։ Ամեն տեղ
շարժվող յերիդներ, թափալուկային (ռոլիկա-
յին) շալիղներ, կախովի շալիղներ, պտուղող սե-
ղաններ, թեք սահոցներ, պտուտակային վարեւակ-
ներ, ամբարձիկ մեքենաներ։

Իրերը թռչում են վեր, թռչում են վար, սահում
են առաստաղով և հատակի միջով անցնում ներքին
հարկը։ Մարդիկ կանգնած են, իսկ իրերը շարժվում
են։

Մեծ գործարանում աշխատանքը ավելի լավ է
կաղմակերպված, ավելի լավ և դրված։

Մի հաղար մարդ մեծ գործարանում շատ ավելի բան կանեն, քան յերկու հաղար հոգին տարբեր փոքրիկ գործարաններում:

Գործարանների և Փարբեկանների մեր ճակատում մենք կովի յենք յերտում մեծ բանակներով խիստ շարքերով: Կանոնավոր կազմակերպության միաբանություն, կարգապահություն—ահա այնպիսի մանները, վորոնք մեղ կտանեն դեպի հաղթանակ:

7. Ի՞նչ ե ասում Կլեմենտը

Կլեմմերը ամերիկական ինժեներ է: Ժամանակից յեղել ե քարտահ Մարտինյան ցեխում: Այժմ ամերիկական ամենահմուտ մետաղագործն է, մետաղ մասնագետն է:

Նրան հրավիրեցին ԽՍՀՄ, վոր իր գործով ու գործությամբ ողնե մեզ:

Ի՞նչ ե ասում ինժեներ Կլեմմերը:
Նա ասում է.

«ԽՍՀՄ-ի մետաղագործությունը դեռ նախնական վեճակումն է գտնվում, չնայած ունի մի քառ հին գործարաններ: ԽՍՀՄ-ի մետաղագործությունը դեռ չի սկսված: Դրա համար ել դուք յերջանիկ եք, վոր կարող եք ամեն ինչ կառուցել»:

Սա ի՞նչ ե նշանակում:

Մենք յերջանիկ ենք, վոր գործարաններ չունենք: Սա ի՞նչ անխմաստ բան է:

Կլեմմերը ծիծաղո՞ւմ է մեղ վրա, թե ի՞նչ է:
Վո՞չ, ինժեներ Կլեմմերը լուրջ է ասում: Յեկան ձեւու է: Շատ ավելի լավ է նորից կառուցել, քան հին անակտքը վերաշնիւր: Ահա ձեղ Ամերիկան ունի բաղմաթիւ չին գործարաններ, հին մեքենա-

ներով: Այդ վործարանները շատ ավելի վատ են աշխատում, քան նորը: Բայց և այնպես դեռ այդ հերից ձեռք չեն քաշել: Զե՞ր վոր ահաղին մելիոն դուլարներ ե ծախսված նրանց վրա:

Մենք սկսում ենք նոր մեկանց կառուցել: Մենք կարող ենք տեխնիկայի վերջին խոսքով կառուցել: Մեր գործարաններում կործեն նորագույն մեքենաները, ամենալավերը:

Մենք կառուցում ենք բաց, դատարկ տարածության վրա: Վո՞չինչ, ավելի հարմար ե բաց տարածության վրա կառուցելը:

8. Այնտեղ, ուր կազմակեր են քափառում...

«Մագնիսի սարը: Սա մեկը չե, ամ չորս սար է, Երա վեհչերից սկսվում ե տափաստանը: Ամառ նրա ստորաներում յերկում ե «Կոչ»՝ քոչվոր կիրակիպի*): յուրթը: Յերկաթահանքը թաղված ե չերտվար 3-4 մետր յերկարությամբ, 2 մետր հաստությամբ ու լայնությամբ: Հանքն ամենալավ տեսակիցն է, համարյա չունի վնասակար խառնուրդներ: Հանե, համարյա չունի վնասակար խառնուրդներ: Գործաքը մշակում են բելորեցկի գործարանում: Վորորանը մի տարում այնքան եր արդյունահանում, վորորանը նա կարող եր այդ անել 2-3 շաբաթում: Հանքի հակայական պաշտոններ մնում ելին անձեռնախելիք»:

Այս հատվածը քաղված է մի աշխարհագրության վրեից, վոր լույս եր տեսել հեղափոխությունից մի քանի տարի առաջ:

*.) Կար ժամանակ, վոր կազմակատանի բնակիչներին սիամական կիրգեկ ելին անվանում:

Այժմ Մագնիս սարի ստորատներում, այնտեղ՝
ուր մի ժամանակ կաղակն եր թափառում իր խաչ-
նելով, շինվում է մետաղադործական մի հսկայա-
կան գործարան:

Հին Բելորեցկի գործարանում աշխատում
ելին 1700 բանվոր:

Մագնիս սարի գործարանում այժմ աշխատում
են 6000 բանվոր: Տարբերությունն այնքան ել մեծ
չե:

Բայց հին Բելորեցկի գործարանում մեքենա
աշխատավորների թիվը հազիվ հասնում եր 24 հա-
զարի (1.200 ձիու ուժ):

Իսկ Մագնիտասարի գործարանում նրանց թիվը
հասնելու յի 1600 հազարի (80 հազար ձիու ուժ):

Մեքենա-ողնականների թիվը Մագնիտասարում
համարյա 70 անգամ շատ ելինելու:

Ահա հենց դրանումն ետարբերությունը մինչ
հեղափոխական գործարանների և այն գործարանների
միջև, վոր այժմ են կառուցվում:

Ի՞նչ ետ անելու Մագնիտասարում մեքենա-ողնա-
կորների այդ հսկայական բանակը:

Նրանց առաջ դրված եմի կարմոր խողիր:

Վերցնել Մագնիտասարը՝ յերկաթահանքի այդ
հսկայական զանդիվածը և վերածել պողպատե սել-
սերի, գերանների, ձողերի և թերթերի*):


*) Այսպես եր նախկին ծրագիրը. այժմ պահանջը մեծացըր-
գած թե 800 հազար տոնն չուղում, ինչպես յենթալրվում եր ա-
ռաջ, այլ 2 և կես միլիոն տոնն: Ամբողջ աշխարհում մեր ա-
մերիկան ունի արդարի մի մեծ գործարան: Եւ լեքտրոկայանի
կարողությունը լինելու յի վո՞չ մեկ 80 հազար, այլ՝ 300 հազար
ձիու ուժ: Բանվորների թիվն ել անհամեմատ շատ ելինելու,

ինչպես այդ իրադրծել:

9. Մի սար, վոր ամբողջապես պիտի լավվի

Աթաչ սարը՝ Մագնիտասարի չորս գագաթներից
մեկն է: Լեռնալանջերին փորված են աստիճաններ:

Ամեն մի աստիճանը 8 մետր բարձրություն ունի:
Աստիճաններով շինված են ոելսերի ճանապարհ-
ներ, այդ ճանապարհներով անց ու դարձ են անում



Վ. 21.—Յերկաթե գաղանները՝ եքսկավատորները կափեն Ա-
թաչ սարը: Ամբողջ հանքը կտոր-կտոր կանեն ու կտանեն:

Եկտրական գնացքները: Լեռնափոսերում աշխա-
տում են եքսկավատորները՝ բերնավորում են նոր
պայմանները: Հանքը վագոնները: Դա Մագնիտասա-
րի ալպագա հանքավայրն է:

Այժմ Աթաչ սարի ամենդիտաձև թմբերը դեռ
չեն վերացված: Բայց շուտով կզան բանվորները
պեղիչ դադյաներով ու դինամիտներով: Կղղրդա-

Աթաչ սարը ծանր հարվածների տակ:

—Այդ ի՞նչ է, —կհարցնեն մարդիկ: Այդ վո՞ր տեղից են թնդանոթներ արձակում:


—Վոչ, —կապատախանեն նրանց, —դրանք թնդանոթներ չեն: Դա Աթաչ սարն է, հանք են պարթեցնում զինամիտով:

Յերկաթե գաղանելը՝ եքոկալատորները կլավեն Աթաչ սարը: Աստիճան-աստիճան, կտոր-կտոր կհանեն ու կտանեն վողջ հանքը: Սարի գաղաթը ավելի ու ավելի կցածրանա, ավելի ու ավելի խորը կփորեն սարի ներսը: Տոնն-տոնն կուղարկեն գործարանները՝ հնոցավառարանները: Յեկ այնուել հնոցի վառարանների հրավառ վորովայնում հանքաքարից կճուղեն չուղում մեր գործարանների հար:

10. Ածուխի ու համբակարի կարկանդակներ

Յերբ հանքաքարը քանդում են, ստանում են և՛ մեծ-մեծ կտորներ, և մանրունք: Մանրունքը հնոցի վառարանների համար անպետք են: Յեթե այդ մանրունքը գցեն վառարանները, ասպա գրանք կծածկեն մեծ կտորների արանքը և հնոցը կհանդէի: Այդ միանույն է, թե ինքնայենի խողովակից լցնենք վոչթե ածուխի կտորներ, այլ ածուխի փոշի:

Բա ի՞նչ անենք այդ մանրունքը:
Դեն ածենք, ինչպես անում եյին առաջ:
Վոչ, մենք այդ չենք անի: Դա սոսկ զիրիլ չե, այլ յիրկաթ: Զի՞ վոր մենք գոն-դուռ ման ենք զալիս, հալաքում ենք յերկաթի կտորանքներ: Յերկաթը մեզ համար նույնն է, ինչ վոր հացը: Ինչպիս մենք դեն շպրտենք այդ:



Ակ. 22.—Կախովի ճանապարհով, գործարանի վերից, վանասպարհով, բենավորված սահում հն զեղի գոնեաները հանքաքարով բենավորված սահում հն զեղի հնոցը: Նրանց տակը ցանց և փառ, ինչպես կրկեսում: Յեթե հնոցը: Նրանց տակը ցանց և փառ, զախից, վարելալին և վազնեատը պոկիլի, կընկնի ցանցի վրա: Զախից, վարելալին և սկարելալի պոկիլի, կընկնի ցանցի վրա: Ներքեսում՝ դնացքն և: Ակիր ու կոքս բարձրացնելու համար: Ներքեսում՝ դնացքն և: Ակիր ու կոքս բարձրացնելու դրված են չերեփներ՝ չուղունի համացին ոլլատափորմաներին՝ դրված են չերեփներ՝ չուղունի համար. դնացքը յեկել և չուղունի տանելու:

Պետք եւ մի հնար գտնել: Պետք եւ գտնել մի մի
ջոց այդ մանրունքներից սասանալ հանքի խոչով
կտորներ: Յեկ այդպիսի միջոց գտան: Հանքար
քարի այդ մանրունքից մենք կթիւնք կարկան-
դակներ: Կիսամենենք դրանց ածուխի փոշի և կը
թիւնք մեծ ամաների մեջ: Ածուխը կայրպի, իսկ
հանքաքարի կտորտանքները կմերլեն փրար ու կը-
դառնան սև կարկանդակներ: Այդ կարկանդակները
մենք կածենք տաշտակների մեջ և թիւք յերկաթե
ճանապարհով կուլարկենք վերև՝ հնոցի ամենա-
բարձր մասը: Տաշտակները վեր համեմուն ոքս,
շուր են գալիս ու կարկանդակների այդ կույտը ներս
և ածվում հնոցվառարանի աժդահաւ յերախը:

11. Զահսնված մեքենա

Վերջերս կենինդրապի լրագրներից մեկում
տպված եր մի այսպիսի բան.
«Յուպոստալի» գործարանում պետք և դրվի
ԽՍՀՄ-ում դեռ չտեսված արդյունաբերություն ու-
նեցող «բլյումինգ» վառարանը:
Վառարան, իսկապես վոր ծիծաղելի յե: Բլյու-
մինգը վառարան չե, և նույնիսկ նման ել չե նրան:
Յեկ յեթե դեռ մեզանում չգիտեն, թե ինչ բան է
լրյումինգը, նրանից և, վոր մեզնից շատերը քիչ
են ծանոթ մեքենաներին: Բայց մի չինդ տարուց
հետո վոչ միայն թերթի աշխատակիցը, այլ ամեն մի
աշակերտ լավ կիմանա, թե ինչ բան է բլյումինգը:
Իսկապես ի՞նչ բան է բլյումինգը:
Դա վոչ վե վառարան է, այլ մեքենա, վոր
դեր՝ ուելսեր և մարդակներ պատրաստելու համար:

Զի՞ վոր Մարտինի ցեխում՝ այսուեղ, ուր չուգունից
պողպատ են շինում—միանգամից ուելսեր ու մարդակ-
ներ չեն ստացվում, այլ կարճ, հաստ ձուլույթներ:
Հարկավոր ե այդ ձուլույթները ձգել, գրգնակել
ուանակների տակ, ինչպես խմորը գրդնակի տակ:

Ահա նույն բանն ե անում գրդնածո դագդյանը՝
Բլյումինգը: Բլյումինգը մի սովորական մեքենա
չե, այլ մի հսկա յե, աժդահաւ: Ելեքտրական
սայլակը տանում ե նրան շիկացած հրավառ ձու-
լույթը: Մոտենում ե սայլակը բլյումինգին, շուր
ե տալիս ձուլույթը ոովիկային ճանոպարհին: Պը-
տըտվում են սովորակները, ձուլույթը շարժվում ե,
տըտվում ներս բլյումինգի գլանակների ներ անց-
քով: Շուր ե գալիս մյուս կողքին, և նորից անց-
նում մեքենային:

Մեքենան արագորեն յետ ու առաջ, յետ ու ա-
ռաջ ե գարձում ձուլույթը, մի կողքից մյուսն ե
շուր տալիս, ձուլում-ձգձուլում ե, թրծում ե բոլոր
կողմերից:

Մի յերկու րոպեյում ձուլույթը նվազում ե,
ձգվում, յերկարանում ե իբրև մի կրակե ոճ: Մեկ
ու կես մետր յերկարություն ունեմ, այժմ դառնում
ե քսան մետր:

Իսկ վերեւում վորպես նախապետ՝ կանգնած ե
մեքենավարը: Վորքա՞ն փոքր և յերեւում: Թեև ա-
մենինավարը: Վորքա՞ն փոքր և յերեւում: Այդ նա յե, վոր տաք
մեն ինչ նա յե կատարում: Այդ նա յե, վոր տաք
մեն ինչ նա յե կատարում: Վեկ ձեռքերն ել չի
պես ձեռնածուն իր գնդակը: Յեկ ձեռքերն ել չի
պես ձեռնածուն իր գնդակը: Յեկ ձեռքերն ել չի
պես ձեռնածուն իր գնդակը: Յեկ ձեռքերն ել չի
պես ձեռնածուն իր գնդակը:

Ձուլույթ, վոր մի քանի տոնն ե կշռում:

Ահա թե ինչպիսի մեքենաներ են ունենալու մեջ տաղաղործական գործարանները : Յերեք տարում, չնպամյակի վերջում՝ մենք կառուցելու յենք 10-12 բլլումինդ : Ամբողջ աշխարհում դրանց թիվը միայն քառասուն է :

Հնդամյակի վերջում չուղունի արդյունաբերուստային, տարեկան արդյունաբերությունը 3½ միլ. մենք Մակնիտազորի 17 միլիոնի : Դրա համար յենք նաև մի քանի հսկա՝ զիգանտ գործարաններ՝ Զաղորոդի, Կուպոնցի, Մարիպոլի և Նիժնի-Տաղիլի : Այդ հինգ նոր գործարանները չառ ավելի չուղուն են տալու; քան մեր ոոլոր հին գործարանները չառ ավելի ըստ միասին վերցրած :

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴԻ

ՅԵՐԱՅԹԵ ՎԱՐՊԵՏԱԿԱՐ

1. Վորոշիլ են ամենակարևոր մեքենաները

Մենք կունենանք մեքենաների համար մետաղ, նույնպես և ներդիրաշարժիչ ուժ: Ուրեմն ի՞նչ պիսի մեքենաներ ենք շինելու-կառուցելու:

Մեզ հարկավոր են ամեն տեսակ մեքենաներ: Մեքենաներ շատ-շատ կան: Ամեն մի աշխատանքի համար մեքենա կա հնարած: Մեքենաներ կան, վորոնք կոչիներ են կարում: Մեքենաներ կան, վորոնք թել են մասում: Մեքենաներ կան, վորոնք յուղ են հալում: Մեքենաներ կան, վորոնք թուղթ են պատրաստում:

Են: Յեվ վերջապես մեքենաներ ել կան, վորոնք մեքենաներ են չինում:

Մեքենաներ կան տասնյակ հազարներով: Վորոնք են նրանցից ամենակարենուները:

Ամենակարենը այն մեքենաներն են, վորոնք մեքենաներ են պատրաստում: Յեվ սա հասկանալի յեթե մենք ունենանք այլպիսի մեքենաներ, կույն յեթե մենք այս մեքենաները այլպիսի մեքենաները: Յեթե մենք ունենանք յերկաթե դարբիններ, փականագործներ, հղկիչներ ու փայլեցնողներ, շաղաբրիչներ, հղկիչներ ու փայլեցնողներ, նրանք մեր բոլոր գործարանների համար կինեն ամեն տեսակի մեքենաներ :

Ահա հենց սա յե գլխավորը:

Մինչև հիմա մենք այլպիսի մեքենաներ քիչ ունենք: Մենք ունենք ավտոմոբիլներ, բայց չունենք այնպիսի մեքենաներ, վորոնք ավտոմոբիլներ չինչին: Մենք ունենք տրակտորներ, բայց չունենք ներկին: Մենք ունենք տրակտորներ: Յեվ այս և պատճառը, տրակտոր չինչ հիմա, նույն իսկ այսոր, արտասահմազոր մինչև հիմա, նույն իսկ այսոր, արտասահմազոր բերում ավտոմոբիլներ, տրակտորներ և այլ ներկ ենք բերում ավտոմոբիլներ, տրակտորներ վճարում: մեքենաներ ու հսկայական գումարներ վճարում:

Հենց վատն ել սա յե: Մեր յերկիրն աշխատում է պլանով ու այդ աշխատանքը չպետք է կախում ունենաւ մի ինչ վոր միստը Ֆոկսի քմահաճույքից:

Ոտար յերկիրի կապիտալիստներին դուր չեն զալիս մեր պլանները, նրանք ամեն կերպ աշխատում են մեր պլանների: Նրանք հսկանում են, վոր մենք են մեզ խանգարել: Նրանք հսկանում են, իսկ սոցիալիզմը վերջ առցիւլիզմ ենք կառուցում, իսկ սոցիալիզմը հարստահակում «փող աշխատելուն», որպահպահում է կապահպահում:

բելուն: Բայց ել ինչո՞ւ յին ուրեմն նրանք մեքենա-
ներ ծախում մեկ: Միայն նրա համար, վոր նրանց
գողներ են հարկավոր, հարկավոր ե սպառել անպահ
պատրաստած ապրանքը: «Դժվար և վաղվա համար
հրաժարվել այսորվա դուլարից»— այսպէս ե մտա-
ծում ամերիկացի միլիարդեր ֆորդը:

Մենք չենք կարող կախումն ունենալ յելլուսա-
կան և ամերիկական կապիտալիստներից: Ու այս
նենք այնպիսի մեքենաներ, վորոնք մեքենաներ են
պատրաստում:

2. Իրեր, վորոնիք իրեր են պատրաստում

Կար ժամանակ, յերբ ամեն ինչ մարդն ինքն եր
շնուր: Մարդը գործիքներ և տալիս մեքենայի յեր-
կաթե ձեռքերին ու հրաժայում՝ աշխատել:
Դուք տեսել եք յերբ եխցի խառատի դադյահը:
Ինչո՞վ ենա աշխատում:
Գործիքով, շատ սուր սրած կտրիչով: Բայց
ունելին:

Այն իրը, վոր խառատի դադյահն և տաշում,
ու յել բանկորը չի բոնում, այլ դադյահն ինքն և
բոնում ու պատեցնում: Հաճախ մեքենայի մասին
ասում են՝ ասես յերկաթե մարդն և աշխատում:
Բայց այդ հեշտ չե: Յեթե մեքենաները միայն
մարդու սկզ լավ պետք ե աշխատեն, ապա ուրեմն
մեքենաներ շինելու կարիք չպետք ե ունենային: Մե-
քենան պետք ե լավ աշխատի, քան մարդը: Նա պետք
և աշխատի և կարող ե հարյուր անգամ արագ, հեշտ
և ուժեղ աշխատել, քան մարդը:

Մարդս ունի միայն յերկու ձեռք, իսկ մեքենան
կարող ե ունենալ բազմաթիվ ձեռքեր: Մարդը չի
կարող միանգամից յերկու գործիքով աշխատել, իսկ
մեքենան կարող ե աշխատել վոչ միայն յերկու, այլ
տասնյակ գործիքներով:

Մարդս չի կարող միանգամից յերկու գործ ա-
նել: Նա չի կարող միաժամանակ սղոցել ու կտրուել,
խփել ու ռանդել, իսկ մեքենան՝ կարող ե:

Կան ավտոմատ կոչված դադյահներ: Բանվորը
գաղցահի մեջ և դնում մի քանի յերկաթե ձողեր,
գաղցահը գործի յե անցնում: Սկզբում այդ ձողե-
ղաղցահը գործի յերեք «մեծ կտրիչներով» բոլոր ե կոպտում,
հետո յերեք ուրիշ «մաքրող» կտրիչներով մաքրում
հետո յերեք ուրիշ «հատող» կտրիչներով մանցնում «ձե-
ե ետ բոլորը: Սրանից հետո գործի յե անցնում: Այդ
վավորող» կտրիչը, տաշելով բոլորի գլուխը, իսկ այդ
նույն ժամին պտուտակ շինող գործիքը բոլորի վո-
րատանքն ե կտրում: Յեկա ամեն ինչ պատրաստ
կտրատանքն ե կտրում: Իներորդ գործիքը՝ «հատող» կտրիչը պատրաս-
ե: Իններորդ գործիքը՝ «մաքրող» կտրիչը մաքրում
բոլորը կտրում ե յերկաթե ձողից: Յեկա այս բո-
լորն այնպիս արագ ե կատարվում, վոր հազիվ են
կարողանում ավտոմատի աշխատանքին հետեւել:

Ահա և մեքենաներից մեկը: Աշխատում ե իննը
գործիքներով. և չկարծեք թե գործիքներից մեկը
հանգստանում ե, յերբ մյուսն ե աշխատում:

Բոլոր գործիքներն աշխատում են միաժամա-
նակ: Հատողն աշխատում է առաջին ձողի վրա, ձե-
նակ: Վատողն աշխատում է առաջին ձողի վրա,
վատողը և պտուտահատ գործիքներն զբաղված են
յերկրորդով, հղկիչ ու կտրիչները՝ յերրորդ ձո-
ղի վրա յեն չարչարվում, իսկ կոպտող կտրիչնե-
րը պատրաստում են չորրորդը:

Վո՞ր մարդը կարող ե այսպես աշխատել:

Վո՞չ - մեքենան յերկաթե մարդը չէ: Իսկ արա-
գությունը, վորով նա աշխատում է: ԶԵ՞ վոր յեր-
կանում, կարմրում է: Այսպիսի աշխատում, վոր չի-
մար կտրիչները հասուկ «արագ կտրող» պողպատից
են շնում:

Իսկ ճշոռությունը: Տեսել եք՝ ի՞նչպես են աշ-
խատում դարձիները:
Նրանք աշխատում են յերկուսով: Մեկը փոքրիկ
ձեռքի մուրճով և խփում շիկացած յերկաթին ու ցույց
տալիս, թե վորոնեղ պետք է ծեծել: Իսկ մյուս մուր-
ճահարը ծեծում և հսկա ու պեկիլի ծանր կռանով
ու ավելի մեծ թափով: Բայց մի՞թե կարելի յե ծանր
կռանով, այն ել մեծ թափով խփել հեշտ, չենց այն-
տեղ, վորտեղ հարկավոր է: Ինչքան ուժեղ և թա-
փը, այնքան ել շատ և վրիսումը, իսկ թուջե դարբի-
նը չոգեշարժ կռանը խփում և անսիսալ, առանց վրի-
պելու: Հարվածը ճիշտ է, հարվածը հարված: Վո՞չ
մի սիսալ: Արագ և ճիշտ ե աշխատում թուջե վար-
պելը:

Իսկ ի՞նչ և անում նրա մոտի բանվորը: Նա մի-
այն նյութ է մատակարարում և հավաքում պատ-
րաստի իրերը: Բանվորը նույնին և մեքենայի մոտ,
ի՞նչ վոր աշակերտը վարպետի մոտ:

Միայն թե այնտեղ վո՞չ թե վարպետն է հրա-
մանիկ արձակում, այլ աշկերտն է հրամանիկ ար-
ձակում վարպետին:

3. Յերկու կենիցքաղ և յերեք նրալ

Առաջին հերթին մեզ հարկավոր են դազգյահ-
ներ, չոգեշարժ կռաններ, կող մեքենաներ, սեղ-

միչներ, մկրատներ, սղոցներ: Բայց վորպեսպի այս
մեքենաներն աշխատեն, հարկավոր են շարժիչներ՝
շոգու և ջրի տուրբիններ, դիզելներ, ելեկտրոմա-
տորներ:

Ունե՞նք այս բոլորը:

Ունենք, բայց քիչ:

Սրանց կարիքը մենք պիելի ունենք, քան դաղ-
դյահների: Դաղլյահներ հղնամյակի վերջին մենք պետք
ե շինենք վեց անգամ ալելի, քան այժմ: Իսկ շոգու-
տուրբինները մենք պետք ե շինենք տասն և մեկ ան-
գամ ավելի: Ջրի տուրբիններ ել մեղ շատ են հար-
զամ պիելի: Ջրի տուրբինները պեղ շատ են հար-
զամ պիելի. մենք ինն անգամ պիել պետք ե շինենք, քան
հնգամյակի սկզբին:

Մա մի հսկայական առաջադրություն և, և
այս պահանջը պետք է կատարենք: Այլ կերպ կը-
քանդիլի հնգամյա պլանը:

Բայց մենք վորքա՞ն ջրի և շոգու ելեկտրոլիա-
յաններ ենք ոկտեղ կառուցյել: Սրանց յուրաքանչյու-
րի համար հարկավոր են տուրբիններ:

Իսկ շոգու կաթսանե՞ր: Սրանցից ել մենք քիչ
ունենք:

Յեկ այն, ի՞նչ վոր ել ունենք, վաղուց են հնացել,
մաշվել: Մեր գործարաններում կան ծեր կաթսա-
մաշվել: Մեր գործարաններում կան ծեր կաթսա-
մաշվել: Վեր շինված են գեղ անցյալ տարում: Ամեն
ներ, վորոնք շինված են գեղ են Յ-ը, 25 տարուց անց:
մի տասը կաթսայից ծեր են Յ-ը, 25 տարուց անց:
Մեքենան ալելի քիչ և ապրում, քան մարդը: 25
Մեքենան կաթսան արգեն ծեր է: Մերերին՝ հանել:
տարեկան կաթսան արգեն ծեր է: Մարտինյան վա-
